

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԹԱԳԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՕՍՔ

Մարդկային ընկերութեան բաղկացուցիչ հաւաքականութիւններ եւ ազգեր ունին իրենց խորհրդանիշերը, զանազանութեամբ ուրիշներէն եւ արտայայտելու իրենց էութիւնը զինանշաններով, դրօշակներով եւ այլ ձեւերով: Նկատի ունենալով որ դարերու ընթացքին վերոյիշեալները կը կրեն մասնակի կամ ամբողջական փոփոխութիւններ, անհրաժեշտ եւ օգտակար է անոնց ուսումնասիրութիւնը սկսիլ հնագոյնէն:

Մեր որոնած հնագոյն խորհրդանիշը մասնաւորաբար Մեծն Տիգրան Բ-ի եւ Արտաւազդ Բ-ի դրամներուն վրայ քանդակուած թագերուն ձեւերուն մէջ էր որ գտանք եւ փորձեցինք մեկնաբանել անոնց իմաստը, միաժամանակ կատարելով ուղղումներ, քանի որ ոչ հայ եւ ոչ ալ օտար մատենագրական աղբիւրներուն մէջ այդ մասին ոչ մէկ ակնարկութիւն չի գտանք:

Վերոյիշեալ խորհրդանիշին վրայ փորձեցինք գտնել անոր թագուն եւ բացայայտ իմաստը, եւ այն ենթադրութիւնները որ կատարեցինք, կը յուսանք որ ուրիշներուն ալ պիտի թելադրեն իրենց կարծիքի քարը աւելցնել հայ տարազի պատմութեան շէնքին վրայ, այսպէսով աւելի լուսաբանելով հայ եւ օտար հասարակութիւնը:

Մարդիկ ընդհանրապէս ուժի դիրքերէն կը դատեն անցեալի եւ ներկայի մեծութիւնները: Հայկական Արտաշէսեան թագերու այս պատմա-արուեստագիտական ակնարկին մէջ պիտի փափաքինք տեսնել ճշմարտութեան աւելի մարդկային կողմը, նկատի ունենալով որ Տիգրան Բ. եւ իր որդին Արտաւազդ Բ., Հայ Ազգի պատմութեան սկզբնական քայլերուն իրենց մեծ բերումը կատարեցին, Տիգրան՝ իր հոյակապ շինարարութեամբ, իսկ Արտաւազդ՝ արուեստի բնագաւառին մէջ եւ եթէ անոնց մեծագործութիւնները չի կործանուէին Հռոմէական բիրտ ուժի քանդիչ հարուածներուն տակ, հայ արուեստի եւ մշակոյթի բնագաւառները այսօր աւելի լուսաբանուած պիտի ըլլային:

Հաւակնութիւնը չ ունիմ ամբողջական գործ մը կատարած ըլլալու, քանի որ դեռ կարելի է ակնկալութիւններ ունենալ հնագիտական պեղումներէն որոնք կը կատարուին Հայաստանի մէջ:

ՀԱՅԿ ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԹԱԳԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Ա. - Թագերը պատմութեան ընթացքին

Թագը կամ խոյրը, որպէս խորհրդանշիչ իշխանութեան, ունի առնուազն հինգ հազար տարուան պատմութիւն: Մեզի յայտնի թագերու հնագոյն նմուշներն են հին Նեփալտոսի երեք թագերը, կարմիր թագը՝ ստորին Նեփալտոսի եւ սպիտակ թագը, որը կը խորհրդանշէր Վերին (բարձր) Նեփալտոսը: Այս երկու թագերու միացումը, կատարուած Նարմերի (Narmer) կամ Մենեսի (Menes) օրով, ստեղծեց նոր, միացեալ Նեփալտոսի թագը, որը բարձր էր իր նախորդներուն նման: Ընդհանրապէս կ'ենթադրուի որ թագերու բարձրութիւնը նպատակային էր եւ հասակի այս արուեստականօրէն ստեղծուած բարձրացումը թագը կրող անձին կուտար գերակայութեան այն արտայայտութիւնը, որը կը կարծուէր թէ կրնար օգնել իշխանութեան տիրացման եւ պահպանման:

Հին Յունաստանի եւ Հռոմի մէջ թագի սկզբնական ձեւը կը կազմէին տերեւներ եւ հատապըտուղներ (baie): Համաձայն Հոմերոսի Իլիականի (XIII-736) ան կը շնորհուէր միայն աստուածներուն եւ կամ ամբողջ բանակի մը: Անշուշտ այս տերեւներու պսակ մըն էր, որը յետագային շնորհուեցաւ նաեւ մարզական, երաժշտական եւ գրական հանդէսներու մասնակից յաղթողներուն, որոնք կոչուեցան թափնեկիրներ (lauréat): Պսակը կազմող տուեսներն էին դափնին, ազատգեղը եւ ձիթենին, որոնց տերեւներու ձեւերը յարմար էին պսակներ կազմելու: Ռազմիկները եւս, իրենց քաջագործութիւններուն համար կը պսակուէին վերոյիշեալներով, ինչպէս նաեւ այն քաղաքայինները, որոնք Հռոմէական քաղաքացիի մը կեանքը կը փրկէին կը պսակուէին կաղնիի տերեւներով: Այն զինուորը որը տազնապի մը ընթացքին բանակի մը փրկութեան պատճառ կը հանդիսանար, խոտէ պսակով մը կը պարգեւատրուէր ամբողջ բանակի թունդ ծափերուն տակ:

Հռոմէական պատուոյ, յաղթանակի եւ փառքի այս խորհրդանշիչ առաջին դարերու քրիստոնեաներու կողմէ նկատուեցաւ նահատակութիւնը պանծացնող եւ քրիստոնէական հաւատքի յաղթանակը ցոյց տուող խորհրդանշիչ մը: Շատ մը հռոմէացի կայսրերու դրամներուն վրայ գլուխները զարդարուած են արեւը խորհրդանշող ճառագայթներով: Այս թագանման ձեւերը կը սերին պսակներէն, որոնց կիսակլորի ներքեւը հարթացուած եւ տերեւները փոխարինող ճառագայթները ուղղուած են դէպի վեր:

Արդէ թագերը, որոնք համադրութիւններ են պսակի եւ միջնադարեան սաղաւարտի, կրողին կուտան բարձրութիւն եւ արժանաւայել տեսք մը, որը զանոնք, իրենց իմաստով եւ ձգտումով կը նոյնացնէ հին Նեփալտոսի բարձր թագերուն հետ¹:

Թագը կարելի է չփոխել գլխարկի հետ, որը ունի զուտ օգտապաշտ նշանակութիւն: Թագի խորհրդանշականութիւնը մեզ կը հասցնէ այն եզրակացութեան, որ ան մարդկային մարմնէն վեր, գլուխը ծածկելէն աւելի զայն կրողին նախապատիւ դեր մը կուտայ: Կարելի է թագը ընդունիլ նաեւ որպէս յաջողութեան նշան մը, քանի որ յաջողաւարտ գործի մը համար յաճախ կ'ըսուի որ ան «յաջողութեամբ պսակուեցաւ», եւ, անցնելով գործէն անդին, զայն կատարող անձին: Պսակը եւ ճառագայթազարդը նաեւ խորհրդանշերն են հոգեւոր արժանիքներու²:

Քրիստոնէական արուեստը եւս յաճախ օգտագործած է պսակը եւ թագը: Թագակիր Աստուածամայրը ցոյց կուտայ որ Ան «երկնքի թագուհին» է (regina caeli): Կարելի է նոյնպէս ենթադրել որ արուեստի մէջ գործածուող լուսապսակը հեթանոսութենէն քրիստոնէութեան փոխանցուած խորհրդապատկեր մէն է որը կը սեռի թագէն: Ճգնաւորներու հերախուզումը եւս (tonsure) կը խորհրդանշէ գոհողութիւն մը, ի յիշատակ Քրիստոսի կրած փչեպսակին:

Երբ թագը նկարի մը մէջ ցոյց կը տրուի անձի մը ոտքերուն առջեւ, կը նշանակէ որ ան մերժած է արքայական իշխանութիւնը³:

¹ Arnold Whittick, *Symbols Signs and their meaning and uses in design*. London, 1971.

² J. E. Cirlot, *A dictionary of Symbols*, p. 72-73, London.

³ George Ferguson, *Signs and Symbols in Christian Art*, Oxford University Press, New York, 1959.

Թագերու պատրաստութիւնը եւս ունի իր առանձնայատկութիւնները: Անոնք ընդհանրապէս կը պատրաստուին ոսկիով եւ կը զարդարուին թանկարժէք ակներով: Որպէս ամենասուղ մետաղը, կ'ենթադրուի որ ոսկին թագը կրողին կուտայ ամենաբարձր քաղաքական եւ զինուորական իշխանութեան իրաւունք: Հնադարեան շրջանին, երբ շատ կարծր քարերը (ադամանդ, չափիւղայ, յակինթ եւ զմրուխտ) տաշելը դժուար էր, յաճախ մարգարիտն էր որ կը զարդարէր թագերը, քանի որ ան ոստրէի պատեանին մէջ բնականօրէն ձեւաւորուած է եւ կարիքը չ'ունի արուեստական ձեւաւորման, որը կրնայ անոր փայլը աղճատել, զայն այլափոխելով ու տգեղացնելով: Նոյնիսկ այն պարագային երբ անկարելի է, տնտեսական դժուարութիւններու պատճառով թագերը ոսկիով պատրաստել, ան կը կերտուի արծաթով եւ կը ոսկեպատուի:

Ինչպէս այլ երկրներ, Հայաստան եւս ունեցած է երկարատեւ արքայական իշխանութիւն, իր ուրոյն թագատեսակներով: Հնագոյն արքայատոհմի՝ Արտաշեսեաններու դրամներուն վրայ շատ գեղեցիկօրէն պատկերուած են Զարէհի, Արտաշէսի, Տիրգրանի եւ այլոց թագազարդ գլուխները: Դժբաղդաբար չկան արձանագրութիւններ կամ քանդակներ ուր պատկերուած ըլլան հայ թագաւորները (Արտաշեսեան) իրենց ամբողջ հասակով ցոյց տուող անոնց ամբողջական հանդերձանքը եւ մենք ստիպուած ենք բաւարարուելու նկարագրելով եւ ուսումնասիրելով միայն անոնց թագերը: Այս գործի համար անհրաժեշտ էր ուսումնասիրել նաեւ այլ դրացի ազգերու աւելի հին, Արտաշէսեաններէն առաջուան, ինչպէս նաեւ անոնց ժամանակակից եւ յետագայ դարերու օտար թագաւորներու, սատրապներու եւ այլոց թագերն ու գլխանոցները, այնտեղ փնտրելով նմանութիւններ, փոխազգեցութիւններ եւ շարունակուող աւանդութիւններ:

Նկատի ոնենալով որ արքայական թագերու վրայ յաճախ ցոյց կը տրուին տւեալ երկրի, արքայատոհմի կամ թագաւորի բնորոշող խորհրդանշիչները, պետական հարուածներու կամ յեղափոխութիւններու պարագային, տապալելէ յետոյ արքայական իշխանութիւնը, նորաստեղծ կառավարութիւններ կը փորձեն յաճախ ձեռքազատուիլ անցեալը խորհրդանշող եւ նոր իշխանութիւնը անհանգստացնող այդ թագերէն եւ այլ գոհարներէն:

Այդպէս էր պարագան Փրանսական յեղափոխութեան ժամանակ, եւ յետոյ, երբ հաստատուեցաւ երրորդ հանրապետութիւնը, իշխանութիւնները աճուրդով վաճառեցին Փրանսական Պուրպոն արքայատոհմէն մնացած թագի գոհարները, որոնք հրաշքով փրկուած էին Նաբոլէոն Ա-ի օրով: Նոյնը պատահեցաւ նաեւ Ռուսաստանի մէջ, սակայն մաս մը թագի (Իմա՝ արքայական ընտանիքի) գոհարներ օտար երկիրներու վաճառէին յետոյ, մնացածները պահուեցան Կրեմլինի թանգարանին մէջ, ուր որոշ մասը այժմ ցուցադրուած է: Սոյն ուսումնասիրութեան շարունակութեան մէջ պիտի տեսնենք թէ ինչ մեծ վտանգներէ անցած են Արտաշեսեան թագերը եւ ոչնչացած առ յաւէտ:

Բ. Նախա-Արտաշէսեան գլխանոցներ

Նախքան Արտաշէսեան թագերու ուսումնասիրումը, անհրաժեշտ է նկատի առնել անցեալի այն գլխանոցները որոնք իրենց ընդհանուր ձեւերով մասնակի նմանութիւններ ունին Արտաշէսեաններու թագերուն հետ: Մեր տրամադրութեան տակ եղող նիւթերը կը տարածուին Ք. Ա. IX դարէն մինչեւ արտաշէսեան գերդաստանի երեւումը պատմութեան թատերաբեմի վրայ:

Այս առթիւ անհրաժեշտ գտանք ուսումնասիրելու ամէն տեսակի պաշտօնական եւ առօրեայ օգտագործման գլխանոցները՝ այնտեղ որոնելու համար այն բոլոր նմանութիւնները որոնք կըրնան մեզ առաջնորդել, գտնելու համար ծագումը առաջին հայկական թագերու ձեւերուն:

Մեր վերոյիշեալ նպատակին հասնելու միակ միջոցն էր նկարել միջին ձեւ մը, ներշնչուած այն բոլոր աչքառու եւ յստակ արտաշէսեան թագերէն, որը կազմէր համադրութիւնը (synthese) հիմնականին մէջ իրար նմանող, սակայն որոշ մասերուն մէջ երբեմն տարուբերող ձեւերուն: Այս թագաձեւը պիտի նկատենք այն տիպարը (նկ. 1) որուն զանազան մասերուն հետ պիտի համեմատենք մեր տրամադրութեան տակ գտնուող նիւթերու մասերը:

Համաձայն Ստրապոնի՝ «.....Եփրատը այստեղից դառնում է դէպի հարաւ, եւ այս պտոյտի ժամանակ հասնում է Կապադովկիայի սահմանները, աջում թողնելով Կապադովկիայի եւ Կոմմագենի սահմանները, ձախում Մեծ Հայաստանի Եկեղիքը, Ծոփքը եւ առաջանում է դէպի Ասորիք⁶։ Սելեւկեանց ներքին կռիւներու մասին՝ «այս բոլորի հետեւանքն եղաւ այն որ երկիրը (Կոմմագենէ) մատնեցին Պարթեւներին, որոնք արդէն Եփրատի միւս կողմը գրաւած էին, ի վերջոյ Հայոց (Տիգրան Մեծի օրով), որոնք Տաւրոսից դուրս էլ գրաւեցին մինչեւ Փիւնիկէ (այժմեան Լիբանան) եւ Սելեւկեան թագաւորների գորութիւնը խորտակեցին նրանց սերունդը ամբողջ ջնջեցին եւ ծովը (Միջերկրական) Կիլիկիոց յանձնեցին⁷։ Շարունակելով, Ստրապոն կը գրէ՝ «այստեղ Կոմմագենում է նաեւ այժմ Եփրատի անցքը, նրա դէմն է գտնւում Միջագետքի Սելեկիայ բերդը, որ Պոմպէոս դարձրեց Կոմմագենին։ Այս բերդումն է որ Տիգրան սպանեց Սելենէ թագուհուն, վերակոչուած Կլէոպատրայ, Ասորիքից վռնտելուց եւ մի ժամանակ բանտարկելուց յետոյ⁸։

Հայ Նրուանդունիներէն սեռած Անտիոքոս I (Antiochus I) Նեմրութ լեռան արձանագրութեան մէջ ինքզինքը կը կոչէ Աքեմենեան սերունդէ, թէեւ ըստ Հայկական Հանրագիտարանի⁹ «Նրուանդ Բ. Աքեմենեան Արտաքսերքսէս արքայի փեսան էր, ուրեմն նրա սերունդը կարող էր մայրական գծով ճանաչուել Աքեմենեան, անշուշտ հայրական՝ (Նրուանդ Բ-ի) գծով մնալով հայ»։

Անտիոքոս Ա. (69–34 Ք. Ա.) իր քաղաքական ճարտարութեամբ Հռոմը հակադրելով Պարթեւներուն, թագաւորութիւնը հասցուց իր հեղինակութեան գագաթնակէտին, որմէ յետոյ պետութիւնը իր անկայուն գոյութիւնը պահպանեց մինչեւ Ք.է յետոյ առաջին դարու 17 թուականը, երբ Հռովմայեցիք զայն կցեցին կայսրութեան Սուրիոյ Նահանգին¹⁰։ Անտիոքոս Ա. գրեթէ ժամանակակից է Տիրուան Բ-ին որը թագաւորեց Ք. Ա. 95–էն 55 թուականը։

Իր փառքի գագաթնակէտի ընթացքին, շատ հաւանաբար Տիգրան Բ-ի (55 թուի) մահուանէ յետոյ, երբ անոր հեղինակութիւնը կորած էր եւ երկիրը տկարացած, ճարտար պատեհապաշտ Անտիոքոս Ա. որը Տիգրան Բ-ին վերապրեցաւ 21 Տարի կառուցեց հոյակապ յուշարձակ մը իր անձին յիշատակին, այժմեան Նեմրութ Տաղ կոչուած վայրը, Վանայ լիճին եւ պատմական հայաքաղաք Մուշի մէջտեղ, Կոմմագենի ծանօթ սահմաններէն շատ հեռու։

Այս յուշակոթողի զանազան քանդակներուն վրայ (նկ. 12, 13, 14) Անտիոքոս կը կրէ այնպիսի թագեր որոնց ոճային եւ շրջագծային կապերը Արտաշեսեաններու թագերուն հետ ակնեւեւ են։ Սակայն իրենց մանրամասնութիւններու մէջ անոնք կը տարբերուին հայկականէն։ Այս երեք թագերուն վրայ կը տիրապետեն բուսական–բնապաշտական յարգարումները, ի հակադրութիւն հայկականի ոճաւորման (stylisation)։ Նոյնիսկ Անտիոքոս Ա-ի հօր՝ Միհրդատ Ա-ի ու Հերակլեսի խմբական խորաքանդակին մէջ (նկ. 15) թագաւորի թագը, բացի իր արտակարգ երկարութենէն, յստակօրէն շրջապատուած է թափնիի տերեւներով, որոնք այնքան բնորոշ են յունական դրամներու զարդարման։

Վերոյիշեալ չորս թագերու երկարածիգ ձեւերը զանոնք որոշապէս կը տարբերին Արտաշեսեան չափաւոր բարձրութեամբ այն թագերէն որոնք ղիտողի ուշադրութիւնը կը կեդրոնացնեն թագակիր անձի դէմքին վրայ, աւելի գովերգելով անհատը, քան թէ թագը։

Կոմմագենէի անցեալի մասին ուշագրաւ տողեր կան Հայ Ժողովրդի Պատմութիւն գրքի մէջ՝ «Անտիոքոս Կոմմագենացու Նեմրութ Տաղում թողած արձանագրութեան մէջ եւս պարզուած է, որ (Ք. Ա.) IV դարի վերջերին Հայաստանում իշխում էր Արուանդես (Նրուանդ) թագաւորը։ Սա յիշատակուում է Անտիոքոս Ա-ի նախնիների շարքում՝ Հայաստանի Նրուանդեան Սատրապից յետոյ»¹¹։

⁶ Ստրապոն, քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան, Երեւան, 1940, էջ 43։

⁷ Նոյն, էջ 83։

⁸ Նոյն, էջ 95։

⁹ Հայկական Հանրագիտական, հատոր 3, էջ 640։

¹⁰ Britannica, Micropaedia, VOL. III, page 36.

¹¹ Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր I, էջ 505։

«Մեր թուից առաջ IV դարի երկրորդ կեսին հայկական լեռնաշխարհում առաջացած Նրուանդեան պետութեան կազմի մէջ մտնում էին Կոմմագենէն, Ծոփքը, Աղձնիքը, Մուկաց աշխարհը»¹²։

Շարունակութեան մէջ կը յայտնուի հետեւեալ կարծիքը՝ «այսպէս, արեւմտեան շրջանները՝ Ծոփքն ու Կոմմագենէն, առաջաւոր Ասիայի Հելլենիստական երկրների տնտեսական վերելքի մէջ ներգրաւուելով աւելի վաղ, քան հայկական լեռնաշխարհի մնացած մասերը, III դարի կեսերին անջատուեցին եւ կազմեցին մի առանձին պետութիւն, որի թագաւորները նոյնպէս Նրուանդունիների տոհմից էին»¹³։ Արմաւիրը նաեւ պետութեան պաշտամունքային կեդրոնն էր։ Այստեղ էր գտնւում Արեգի (Ապոլլոնի, Apollo) եւ Լուսնի (Արտեմիս–Անահիտ) տաճարը։

Տիրելով բազմաթիւ օտար երկիրներու, ինչպիսիք էին Վիրք (Վրաստան), Աղուանք, Արաբներ եւ Փիւնիկէի ճամբով հասնելով մինչեւ Եգիպտոսի սահմանները, Տիգրան Բ. հիմնած էր Հելլենիստական քաղաքակրթութեանը սնուած հոյակապ պետութիւն մը, նման իրեն նախորդած Սելեւկեան եւ Մակեդոնական պետութեանց։ Այս Հայկական Կայսրութեան տկարութիւնը կը կայանար այն բանի մէջ որ այնտեղ չկային ցեղային ամուր կապեր եւ տնտեսական որոշ ներդաշնակ զարգացում, այլ ցեղային այլազանութիւնները եւ տնտեսական զարգացման մակարդակներու անհաւասարութիւնները ստեղծած էին թոյլ միութիւն մը որը առաջին անյաջողութեան պարագային պիտի քայքայուէր¹⁴։

Տիրելով Անտիոքին եւ օգտուելով այնտեղ տիրող բարգաւաճութենէն, ուր հատուցան իր շրջանառութեան դրած դրամներուն մեծ մասը, Տիգրան Բ. աւարտեց իր հսկայական երթը առաջաւոր Ասիայի երկրներու վրայով¹⁵։

Այստեղ հարց կը ծագի թէ ինչո՞ւ Կոմմագենեցի Անտիոքոս Ա-ի նման յուշակոթող մը չի կանգնեցուց Տիգրան Բ.։ Նախ կեանքի կարեւոր մէկ մասը ան անցուց պատերազմերով, իսկ կառուցածներն ալ իր պարտութենէն վերջ քանդուեցան Հռոմայեցիներու կողմէ։ Իսկ Կոմմագենէ ապրեցաւ որպէս Հռոմայեցիներու բարեկամ, աւելի հանդարտ եւ բարգաւաճ կեանք մը, հեռու աւելորդ ռազմական ծախսերէ։

Տիգրանէն առաջ Հայաստան էին ներթափանցած Հելլենիստական պանթէոնի աստուածները։ Նոյնը պատահած էր Ք. Ա. 60–50 ական թուականներուն Կոմմագենէի մէջ։ Ասոր լաւագոյն ապացոյցներէն է Սելենէ թագուհիին մագերու յարդարումը, շատ նման յունական աստուածուհիներուն, Արտեմիս–Անահիտի կերպարանքով (նկ. 16)։ Անտիոքոս Ա-ի դրամը եւս (նկ. 17), ուր ան գլխին կը կրէ Տիգրանեանին շատ նման թագ մը, կը կարծենք որ հատուած է Տիգրանի մահէն վերջ եւ ցոյց կուտայ Անտիոքոս Ա-ի անհաւասար մրցակցութիւնը Տիգրանի դէմ։ Նրուանդունիներու այս վերաբերմունքը անոնց Արտաշեսեաններուն փոխարինելու ձգտման ապացոյցն է։ Ուրիշ ինչպէ՞ս կարելի է ընդունիլ այն երեւոյթը որ Կոմմագենէի Զեւս–Արամազդի գլխաքանդակը (նկ. 18) կը կրէ հայկականի նման գլխանոց մը, քիչ մը սրածայր եւ բարձր գագաթով։ Արդեօ՞ք հայկական պանթէոնի աստուածներն ալ նոյնանման ծածկոյթներ չէին կրեր։

Նեմրութ լեռան այս յուշարձանի լուրջ ուսումնասիրումը կրնայ լոյս սփռել մեր Արտաշեսեան դարաշրջանի կորած արժէքներու պակասը լրացնելու գործին մէջ, քանի որ այս կիսահայկական պետութիւնը, թէեւ առանձին իշխանութեամբ, սակայն մէկ մասնիկն էր ամբողջական Հայաստանին եւ շարունակութիւնը Փոքր Հայքին։

Դ.- Մատենագրական աղբիւրներ

Նախ քան Արտաշեսեան թագերու ծագումը եւ յարակից արուեստագիտական հարցերու ուսումնասիրումը, անհրաժեշտ էր դիմել մատենագրական աղբիւրներու։ Բրիտտոսէ առաջ առաջին դա-

¹² Նոյն, էջ 508։

¹³ Նոյն, էջ 511։

¹⁴ Նոյն, էջ 514։

¹⁵ Նոյն, էջ 565։

րուն արեւելքի մէջ յայտնուեցան Հռովմայեցիները, որոնց ներկայութիւնը, իր կայսերապաշտական քաղաքականութեամբ աղիտալի եղաւ մերձաւոր արեւելքի Հելլենիստական քաղաքակրթութեան բարիքները վայելող եւ արագաքայլ զարգացող ազգերու համար որոնցմէ՝ հայերը, որոնք սկսած էին յունական նոր հիմնուած քաղաքներու հետ մեծ առեւտուր ծաւալել եւ բարգաւաճիլ:

Այս նոր՝ Հռովմէական դարաշրջանը պատճառ դարձաւ Միջին Արեւելքի ազգերու անհաշիւ հարստութիւններու կողոպտման եւ մեծաթիւ ստրուկներու փոխադրման, արեւելքէն՝ արեւմուտք¹⁶:

Ջախջախելով Միհրդատին եւ Տիգրանին, Հռովմայեցիք վերջ կը դնէին Մակեդոնական (իմա՝ Հելլենական) մշակոյթին Ասիոյ մէջ, ուր բոլոր այն պետութիւններէն, որոնք ստեղծուած էին Աղեքսանդրի նուաճումներէն յետոյ, մնացած էին միմիայն փլատակներ եւ մանր թագաւորներ, որոնք անկարող էին զօրաւիգ ըլլալու հելլենական փառքին: Պոնտոսի եւ Հայաստանի երկու մեծ թագաւորները վերջիններն էին, որոնք կրնային Հելլադայի գեղեցիկ քաղաքակրթութիւնը վերանորոգել իրենց երկիրներուն մէջ¹⁷: Փաստօրէն այն բոլոր կռիւները որոնք տեղի ունեցան, վերակենդանացումն էին Ասիայի եւ Եւրոպայի հակամարտութեան, որը մինչեւ օրս կը շարունակուի զանազան ձեւերով:

Անտիոքոս Մեծի կրած պարտութիւնը, Ք. Ա. 190-ին, Մագնեսիայի մօտ, Հռովմայեցիներուն պատեհութիւն տուաւ իրենց ազդեցութիւնը ամրացնելու Փոքր-Ասիայի զանազան մանր պետութիւններու մօտ: Անոնց նպատակն էր ազատարարի կեղծ դիմակին տակ, այդ շրջանի ժողովուրդները տկարացնել եւ աստիճանաբար բոլորին տիրել:

Ըստ Պլուտարքոսի՝ «Աննիբալ, Հռովմայեցիներէն յաղթուելէն յետոյ, խորհրդատու դարձաւ Արտաշէս Ա-ի եւ գտնելով յարմարագոյն վայրը՝ այդ տեղում յատակագիծ ուրուագծեց եւ.....համոզեց (Արտաշէսին) հիմնել այդ տեղում քաղաք (Արտաշատ)»¹⁸:

Արտաշէս Ա-էն մինչեւ Տիգրան Բ. անցած ժամանակաշրջանի մասին յստակ տեղեկութիւններ չ'ունինք, սակայն, համաձայն Պլուտարքոսի, Տիգրան Բ. գահ բարձրացաւ Պարթեւներու մօտ պատանդ մնալէ յետոյ, Ք. Ա. 95-ին: Ան անմիջապէս արքայական թագ կապեց այն տեղը, ուր ինքը յետոյ հիմնեց Տիգրանակերտ քաղաքը (համաձայն Ապպիանոսի): Ըստ երեւոյթին Տիգրան ունէր կանոնաւոր եւ ծրագրուած քաղաքականութիւն մը¹⁹:

Սելեւկեաններու մայրաքաղաք Անտիոքը, իր կէս միլիոն բնակչութեամբ, դարձաւ Տիգրան Բ-ի գահանիստ քաղաքը, ուր հատուեցան իր պատկերով շատ մը գեղեցիկ եւ ինքնատիպ դրամներ:

Համաձայն նոյն Պլուտարքոսի՝ «Շատ թագաւորներ սպասաւորում էին Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին լինում, որպէս ուղեկիցներ եւ թիկնապահներ, եւ երբ նա գնում էր ձիով նրանք.....վազում էին առջեկից, իսկ երբ նստած էր լինում եւ Պաշտօնական գործերով զբաղուում, նրանք կանգնած էին լինում նրա շուրջը, իրար ձեռքից բռնած»²⁰: Արդեօք այս թագաւորներէն մէկը Կոմմագենէի Անտիոքոս Ա-ը չէր: Շատ հաւանաբար այո:

Կը հետեւի Տիգրանակերտի հիմնադրութիւնը, ոչ շատ նորմալ պայմաններու տակ: Այս մասին Ստրապոն կը գրէ՝ «Երբ Տիգրանը զօրեղացաւ մինչեւ այդ աստիճան՝ նա հիմնեց մի քաղաք.....որն անուանեց Տիգրանակերտ եւ բերեց այդտեղ իր աւերած 12 հելլենական քաղաքների բնակչութիւնը»²¹:

«Օգտագործելով աղբիւրների տեղեկութիւնները՝ Գերմանացի գիտնականներ Լեմանը եւ Բելքը մանրամասն կերպով նայել ու քննել են տեղում բոլոր վերոյիշեալ վայրերը եւ որոշել են որ հին Տիգրանակերտը գտնուել է, իրօք, Տիգրիս գետի հիւսիսակողմում եւ այժմեան Փարկին քաղաքի տեղում: Նոյն կարծիքը յայտնած է նաեւ Փելտմարշալ Մոլթքէն (Moltke)»²²:

¹⁶ Յակոբ Մանանդեան, Տիգրան Բ. եւ Հռովմ, Երեւան, էջ 15:

¹⁷ J. de Morgan, Histoire du peuple Arménien, Paris, 1919, page 80.

¹⁸ Յակոբ Մանանդեան, Տիգրան Բ. եւ Հռովմ Երեւան, 1940, էջ 23:

¹⁹ Նոյն, էջ 51:

²⁰ Նոյն, էջ 58:

²¹ Նոյն, էջ 62:

²² Նոյն, էջ 65:

Մեծն Տիգրան հրաւիրած էր Աթէնքէն աքսորուած նշանաւոր հռետոր Անիիկրատեսը, որը արհամարհանքով մերժած էր Սելեւկեաններու հրաւերը եւ (Տիգրանակերտի մէջ) Տիգրանի արքունիքի հիւրն էր, ինչպէս նաեւ Մետրոդոքոս Սկեպտացին, որը յայտնի գրող եւ փիլիսոփայ էր: Ան գրած էր Մեծն Տիգրանի ընդարձակ պատմութիւնը, որմէ այժմ ոչ մէկ հետք չէ մնացած: Տիգրան կառուցած էր մեծ թատրոն, այնտեղ հրաւիրելով յոյն դերասաններ: Յետագային Արտաւազդ գրած էր նաեւ ողբերգութիւններ, որոնցմէ մի քանի հատը յայտնի են եղած նոյնիսկ Պլուտարքոսին²³:

Վերոյիշեալ բոլոր վկայութիւններէն յետոյ, երբ Պլուտարքոս կ'անուանարկէ Մեծն Տիգրանին, ինքզինք կը հակասէ, հանդէպ գալով որպէս Հռովմէական կայսերապաշտութեան գովերգու:

Հայ-յունական այս գործակցութենէն առաջ էր եկած նաեւ կրօնի մերձեցում, հայ հեթանոսական աստուածները միաձուլելով յունականի հետ, օրինակ,՝ Անահիտը՝ Արտեմիտէին եւ այլն:

Այս քաղաքակրթական գործունէութիւնը հակադիր հոսանք մը սկսած էր ընդդէմ տիրող իրանիզմի, ի նպաստ կենցաղի հելլենականացման²⁴:

Տիգրանի մասին պերճախօս է Պորենացիի հետեւեալ վկայութիւնը՝ «Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն եւ խոհեմագոյն, եւ արանցն այնոսիկ եւ ամենեցուն քաջ.....եւ զասհմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան.....»²⁵: Իսկ ռազմական ուժի մասին՝ «հետեւաւամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, եւ պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, եւ շերտաւորքն ի սուսեր եւ ի տէգ նիզակի վառեալք.....: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, եւ որ ի նոցայն պահպանակաց եւ զինուց փայլմունք եւ շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել»²⁶:

Տիգրանակերտի հերոսական դիմադրութիւնը եւ Տիգրանի նոր կազմուած զօրաբանակով հասնելու պարագան զանց առնուած է Պլուտարքոսի մօտ եւ մեզ յայտնի է միայն չեզոք աղբիւրներէ, որոնցմէ քաղած են Ապպիանոսը եւ Մեմոնը:

Միհրդատի զօրքերու օգնութեամբ երբ՝ «սրանք գալով այնտեղ եւ կտրելով նետաձգութեամբ հռովմէական ճամբարից դուրս գալու ճանապարհը, դուրս բերին գիշերով նախապէս Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժէքաւոր իրերը (հաւանաբար նաեւ Տիգրանի հանդիսաւոր առիթներու թագը, հ. Տ. դ.)»²⁷:

Իր պարտութենէն առաջ Լուկուլլոսը անխնայ կերպով կողոպտած էր Տիգրանակերտի մէջ մնացած գանձերը՝ ութ հազար թոքոս տաղանդ, որի այսօրուան արժէքը պիտի կազմէր 170 միլիոն տոլար (ըստ գերմանացի գիտնական Հոլլչի հաշուումներուն²⁸: Լուկուլլոսի փառքի անփառունակ վախճանով վերջ կը գտնէր Հռովմէական կայսերապաշատ քաղաքականութեան այս փուլը:

Ծանր էր Հռովմէական հանրապետութեան դրութիւնը եւ Ք. Ա. 66 թուին, Պոմպէոսին արտակարգ իշխանութիւն (imperium maius) տրուեցաւ արեւելքի պատերազմը շարունակելու համար, ինչպէս նաեւ բացարձակ իրաւունք պատերազմ յայտարարելու եւ հաշտութիւն կնքելու հռովմէական ժողովրդի անունով²⁹:

Իր երկրորդ կնոջմէն՝ Միհրդատի դուստր Կլէոպատրայէն Տիգրանը երեք որդիներ ունէր, որոնք բոլորն ալ թագաւորական իշխանութեան կը ձգտէին իրենց հօր մահէն առաջ: Անդրանիկը՝ Զարեհը (Zariadris, համաձայն Valerius Maximus-ի) Տիգրանէն դժգոհ հայ իշխաններու հետ դաւադրաբար փորձեցին գահընկեց ընել Տիգրանին, սակայն ձախողուելով, բոլորն ալ սպանուած էին: Միջակ որդին, որու անունը մեզ յայտնի չէ, անոր (Տիգրան Բ.) եւ կրտսեր Տիգրանի հետ որսորդութեան ընթացքին, Տիգրան Բ. ուշաթափուելով, վերոյիշեալ որդին առիթէն օգտուելով հօր թագը խլելով կը դնէ իր գլխուն, իսկ կրտսերը կ'օգնէ հօրը: Ուշքի գալով, Տիգրան Բ. կը հրամայէ մահապատժել

²³ Նոյն, էջ

²⁴ Նոյն, էջ 67-68:

²⁵ Պորենացի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 71:

²⁶ Նոյն, էջ 72:

²⁷ Յ. Մանանդեան, Տիգրան Բ. եւ Հռովմ Երեւան, 1940, էջ 106:

²⁸ Նոյն, էջ 134:

²⁹ Նոյն, էջ 169-170:

Մեր քաղաք տեղեկություններն ուղարկում են երկու երեկոյթներ: Առաջինը՝ Մարական ուղիղ թագն է: Արդեօ՞ք «ուղիղ» բառով Պլուտարքոս կ'ակնարկէ երկու կողմերէն մեկնող ուղղահայեաց ձեւերով թագի մը, նման հայկականին, առեղծուած մը որ առ այժմ անյուշելի է: Սակայն երբ նկատի ունենանք որ Անտոնիոս իր եւ Կղէոպատրայի որդիին կը շնորհէ հայկական պահակախումբ մը, ինչո՞ւ նաեւ անոր գլխին չափտի դնէր հայկական կամ նմանօրինակ թագ մը, եւ կամ գերի տարուած Արտաւազդ Բ.ի սեփական թագը, որը շատ տիպականօրէն արտաշէսեան է, ըստ իր դրամի: Կարծէ այս առթիւ յիշել պատմագիր Յովսէփոսի (Քր.-է ետք 37-38 էն 100) վկայութիւնը՝ «.....Անտոնիոս տիրեց Հայաստանին եւ Տիգրանի (Բ.) որդի Արտաւազդին (Բ.) իր զաւակներուն եւ գործակալներուն ղրկեց Եգիպտոս գերութեան, եւ զանոնք, ինչպէս նաեւ արքայական զորքերը որ ինք դուրս բերած էր (հայոց) թագաւորութենէն, նուիրեց Կղէոպատրային» (Gosephus, Complete wories, translated by William Whiston, A. M. page 319):

Երկրորդը զրահապատ ձիերն են, որոնք Հռովմայեցիներուն համար նորութիւն մըն էին, քանի որ հռովմայեցիները անզրահ ձիեր կը գործածէին եւ այս միջին-արեւելեան սովորութեան առաջին անգամ էր որ կը ծանօթանային:

Դաւադրաբար կալանաւորութենէն (Ք. Ա. 34-ին) երեք տարի վերջ, Արտաւազդ Բ. սպանուեցաւ բանտի մէջ, Ակտիոնի (Actium) ճակատամարտի ժամանակ:

Ե.- Նախա-արտաշէսեան ժամանակաշրջանի հայկական գլխաւորները

Իր բովանդակ պատմութեան տեւողութեան Հայաստանը նկատի առնուած է որպէս մէկ եւ անբաժանելի միաւոր եւ այս մասին կը կարդանք՝ «Ըստ երեկոյթին, V-IV դարերի եզրին հայկական լեռնաշխարհում կար վարչական մի հիմնական ընդհանուր միաւոր՝ Հայաստանը որի ենթաշրջանն էր Արեւմտեան Հայաստանը (Փոքր Հայք)»³⁹:

Հայ զօրավար Արտաշէս, հիմնադիրը արտաշէսեան հարստութեան, որդին էր Երուանդունիներու գերդաստանէն Զարեհ (Zariadres) իշխանի: Ան նախապէս եղած էր Սելեւկեան բանակի բարձրաստիճան զինուորական եւ Հայաստանի ամբողջական գրաւումէն յետոյ, Անտիոքոս III Սելեւկացին Արտաշէսին (Ա.) նշանակած էր Հայաստանի ստրատեկոս (Կառավարիչ, Սատրապ) Ք. Ա. 200 թուին: 190 թուի Մազնեդիայի պատերազմին Սելեւկեաններու պարտութենէն յետոյ, Արտաշէս Ա. ինքզինք յայտարարած էր թագաւոր անկախ Հայաստանի եւ կարճ ժամանակուան ընթացքին ան գրաւած էր բովանդակ Հայաստանը եւ ստեղծած միաձոյլ պետութիւն իր ուրոյն ազգազրական կազմով:

Օգտուելով Հռովմ-Սելեւկեան հակամարտութենէն ան սկսած էր վարել անկախ քաղաքականութիւն, առանց սակայն դաշնակցելու Հռովմի հետ եւ նոյնիսկ ապաստան չնորհելով Հռովմի մահացու հակառակորդ Աննիբալին:

Արտաշէսի մասին երկարօրէն գրած է Մ. Խորենացին, որը կը պատմէ որ երբ ան արեւմուտքէն կը բերէր այնտեղէն առած աստուածներուն՝ Զեւսի, Արտեմիսի, Աթենայի եւ այլոց արձանները, ճանապարհին կը մեռնի, 25 տարի թագաւորելէ վերջ (Ք. Ա. 165-ին)⁴⁰:

Խորենացիի մօտ կայ նոյնպէս ակնարկութիւն Արտաշէսի թագի մասին: Իր թաղման ընթացքին, կ'ըսէ Խորենացին՝ «Թագադր ոսկեղէն էր..... մարմինը պատող պատմուճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկեայ գէնքն առջեւը»⁴¹: Արտաշէսեան արքայատոհմէն մնացած այն բոլոր դրամներու վրայ քանդակուած թագերը Արտաշէսէն մինչեւ Երատոյ եւ յետոյ Տիգրան Ե., գրեթէ իրար նման են եւ միայն կը տարբերուին իրենց վրայի զարդարանքներու յարդարումով:

Այստեղ կը ծագի լուրջ հարց մը, այն է թէ Արտաշէսեան թագերը իրենց ծագումով հայկական են թէ այլ ազգերէ ընդօրինակուած:

³⁹ Հայ ժողովրդի Պատմութիւն, Երեւան, 1971, հատոր 1, էջ 454:

⁴⁰ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց:

⁴¹ Նոյն:

Սոյն ուսումնասիրութեան Բ. եւ Գ. մասերուն մէջ փորձեցինք փնտռել նախա-արտաշէսեան եւ արտաշէսեաններու ժամանակակից օտար թագերու տիպարներ, այնտեղ գտնելով նմանութիւններ: Սակայն, բացի վիժակէն, որը Կլիմայական պահանջներէ թելադրուած երեկոյթ մըն է, ոչ մէկ իսկական նմանութիւն գտանք Արտաշէսեան թագերու հետ, բացի Կոմմագենէի Միհրդատ Ա.ի եւ Անտիոքոս Ա.ի գործածած թագերէն, որոնք թէեւ ունին ընդհանուր նմանութիւններ արտաշէսեաններու հետ, բացի մեծամասնութեան ներքին զարդարանքներէն, սակայն Կոմմագենէի թագաւորներու հայկական (Երուանդունի) ծագումը մեզ կը մղէ ենթադրելու որ հաւանաբար Արտաշէսեան եւ Կոմմագենեան թագերը ունեցած են նախատիպար մը (prototype) որմէ սեռած են երկուքը: Այդ նախատիպարը պէտք է փնտռել հայկական ժողովրդական գլխանոցներու մէջ, որոնց մասին յետոյ պիտի անդրադառնանք: Եւ կամ արդեօ՞ք իրարմէ փոխադրեցութիւններ կրած են, ստեղծելով միջտոհմային մրցակցութիւն մը:

Տիրիբազի (Tiribazus) արծաթեայ դրամին վրայ, (Ք. Ա. մօտ 401-400) Հիւպարքոսը, որուն Բսենոփոն Սատրապի փոխանորդ կը կոչէ, պատկերուած է գտակով մը ուր վիզը ծածկող վիժակը իր ձեւով աւելի մօտ նմանութիւն ունի յետագայ արտաշէսեաններուն, քան մեր նախորդ ուսումնասիրածներուն (նկ. 19):

Երուանդի (Orontas) ոսկեայ դրամին վրայ (նկ. 20) եւս, բացի վիժակէն, որը Տիրիբազի գտակին նման ունի երեք բաժանումներ ճակատին վրայ կը կրէ կլոր զարդերու՝ հաւանաբար դրամներու, շարան մը որը սակայն չի շարունակուիր մինչեւ ծոծրակը, ինչպէս Տիրիբազի մօտ:

Դժուար է ճշգրիտ կարծիք մը յայտնել այն մասին թէ այս դրամը ո՞ր Երուանդինն է, սակայն նկատի ունենալով ճակատակապը, որը թափնեպսակի ձեւ ունի եւ Հելլենիստական ազդեցութիւն կրէ, կրնանք ենթադրել որ այս դրամը Աղեքսանդր Մակեդոնացիի (356-323 Ք. Ա.) ժամանակակից Երուանդ Գ.ի նկարը կը կրէ: Ք. Ա. 333 թուին Աղեքսանդր Մակեդոնացի Կիլիկիայէն անցնելով եւ Հայաստանի հարաւը քերելով գրաւեց Ասորիքը: 331 թուին, Նինուէն գրաւելէն յետոյ Աղեքսանդր առանձին զօրամաս մը կը ղրկէ Հայաստանի Սպեր գաւառը, գրաւելու համար այնտեղի ոսկիի հանքերը⁴²:

Ուղարկու է Արշամի (նկ. 21) բաւական անաղարտ վիճակի մէջ պահուած դրամը, ուր հակառակ կողմը կայ արձանագրութիւն՝ «Արքային Արշամայ»: Թագաւորը անմօրուս է, ինչ որ բնորոշ է իր ժամանակաշրջանին եւ գլխին կը կրէ գտակ մը, որը եթէ կակուղ նիւթէ պատրաստուած է՝ լար, եւ թեքուած դէպի առաջ ինչպէս դիտումը կը թելադրէ, պիտի ստանար արտաշէսեաններու թագերուն բաւական նման ձեւ մը: Թէեւ Հ. Վարդան Հացունի այս գտակը թագ կը կոչէ, սակայն իր այդ գաղափարին հետ կարելի չէ համաձայնել, գտակի փափուկ եւ շարժուն ձեւերուն պատճառով⁴³:

Արշամի ծննդեան եւ մահուան թուականները յայտնի չեն: Յոյն պատմիչ Պոլիոնոսը (Ք. Ա. Բ. դար) կը յայտնէ որ Ք. Ա. 230 թուին Սելեւկոս Բ. Կալինիկոսի դէմ ապստամբած եղբայրը՝ Անդարի կը յաղթէր Երատոյ թագաւորին: Այսպէսով Արշամը կրնանք նկատել Ք. Ա. Գ. դարու կէսերուն ապրած հայոց արքայ:

Զարեհի դրամներէն մէկը (նկ. 22) անթագ է եւ հաւանաբար այն շրջանէն երբ դեռ թագաւոր չէր, այլ Ծովքի ստրատեկոս էր Ք. Ա. 202-201 թուերուն: Ան կը կրէ շատ ինքնատիպ վիժակով ցցուն գտակ մը եւ իր ճակատամասը զարդարուած է կլոր զարդերով: Վիժակը երեք մասերէ կը բաղկանայ, որոնցմէ առաջինը եւ երրորդը երկու կողմերէն միանալով կը հանգուցուին: Զարեհի ծննդեան եւ մահուան թուականները յայտնի չեն:

Երկրորդ դրամի վրայ (նկ. 23) Զարեհ պատկերուած է արտաշէսեան տիպի թագով: Համաձայն Պոլոնոս Պտուկեանի⁴⁴ այս դրամը ընդօրինակութիւն մըն է, թէեւ, կը կարծենք որ եթէ ընդօրինակու-

⁴² Հ. Տէր Ղեւոնդեան, Ոսկերչական իրեղէններ նախաքրիստոնէական Հայաստանի մէջ եւ անոնց գործածութիւնը. Բազմալեզու, Վենետիկ, 1982, թիւ 1-2, էջ 16:

⁴³ Հր. Վ. Հացունի, Պատմ. Հին Հայ Տարազին, Վենետիկ, 1923, ներդիր, էջ 48-49:

⁴⁴ Հայկական Հանրագիտարան, հատոր 2, էջ 109:

⁴⁵ Paul Bedoukian, Coinage of Artaxiads... London, 1978, Catalogue, p. 46.

Թիւնը իսկական դրամէ մը կատարուած ըլլայ, կրնայ թագաձեւի հարցին մէջ ճիշդ պատկերացում մը տալ մեզի: Զարէ՛ թագաւորած է Ք. Ա. 190-էն մինչեւ մօտաւորապէս 175, որը հաւանաբար նաեւ իր մահուան թուականն է:

Գալով Փոլիւգիական գլխանոցներուն, ոչինչ չի հաստատեր անոնց յունականի հետ կապը, մահաւանդ երբ նկատի ունենանք անոնց վիժակները, որոնք աւելի շատ արեւելեան ծագում մը կը թելադրեն իրենց երեք բաժանումներով, քան թէ արեւմտեան:

Հ. Վարդան Հացունիի աշխատութենէն⁴⁸ երկու նկարագրողումներ որոշ գաղափար մը կուտան Փոլիւգական գլխանոցներու մասին: Անոնցմէ առաջինը՝ Փոլիւգացի ռազմիկը (նկ. 24), անկախ իր սաղաւարտի գագաթի աղեղ նաձեւ մասէն, կը կրէ միակտուր սաղաւարտ մը, որու ստորոտի վիժակի մասը ետ դարձած է եւ երկու կողմերէն բաժնուած, ծառայելով որպէս ականջածածկ: Ըստ երեւոյթին այս սաղաւարտը միակտուր մետաղեայ թերթով դրուագուած է: Երկրորդը՝ Փոլիւգական մենամարտիկներ (նկ. 25), որոնք կը կրեն գրեթէ նոյնանման դրուագուած սաղաւարտներ, որոնց ականջները ծածկող վիժակի երկու կողմերը կը շարունակուին մինչեւ երեսները:

Հերոդոտոսի այն հաստատումը թէ՛ «Հայերը.....գինուած էին Փոլիւգական ձեւով»⁴⁷, շատ լուրջ հարց մը կը յառաջացնէ: Ինչպէ՞ս կրնար պատահիլ, որ Ք. Ա. հինգերորդ դարուն, Հայեր, որոնք համաձայն Հերոդոտոսի կը կոուէին Տարիոսի աղջկայ ամուսնոյն հրամանատարութեան տակ եւ դաշնակիցներ էին պարսիկներուն, գինուած ըլլային Փոլիւգական ձեւով: Երկու տարբեր եզրակացութիւններու կարելի է յանգիլ: Կամ ճիշդ է այն տիրող կարծիքը որ Հայեր եւ Փոլիւգացիներ համատեղ անցեալ մը ունեցած են, եւ կամ, Հայեր, շատ իրաւամբ գործնական կը գտնէին Փոլիւգական զէնք ու զրահը: Նկարը ուշադիր դիտելով կարելի է երկրորդին համաձայնիլ:

Զ.- Արտաշէսեան դարաշրջան

Արտաշէս Ա.ի եւ իր անմիջական յաջորդներու դրամները քիչ լոյս կը սփռեն Արտաշէսեան թագերու ճշգրիտ ուրուագծման վրայ եւ միայն Տիգրան Բ. Մեծի օրով է որ արտաքին ձեւի եւ ներքին յարդարման բնագաւառներուն մէջ կը տեսնենք յստակ ձեւաւորում:

Այն դրամը որը կը վերագրուի Արտաշէս առաջինին եւ կը կրէ յունարէն Αρτα (լատիններէն՝ Artata) չորս գրերը, կարելի է նաեւ վերագրել Արտաւազդ Ա.ին (Artavazdes), նոյն արքայատոհմէն, ուրեմն մեր նիւթին հետ այս դրամը սերտ կապ ունի (նկ. 26): Տիգրան Ա.ի նկատուած դրամի (նկ. 27) վրայի թագը եւս, թէեւ ընդհանուր շրջագծով քիչ մը տարբեր, սակայն սերտ կապ կը պահպանէ ընդհանուր Արտաշէսեան թագերուն հետ:

Տիգրան Բ.ի յստակ եւ բարձրորակ գիտարուեստով փորագրուած դրամներուն վրայ ոչ միայն դէմքերը այլ նաեւ թագերու շրջագծերու եւ ներքին զարդարանքներու մէջ շատ ուսանելի կէտեր կան: Նախ թագի այն մասը որը գլուխը կը ծածկէ աւելի բարձր է նախկիններէն եւ սերտօրէն կը կապուի հայկական ժողովրդական գլխանոցներուն հետ (նկ. 28), ինչպէս այդ յետագային պիտի տեսնենք, իսկ նոյն Տիգրան Բ.ի այլ դրամի վրայ թէեւ թագը աւելի ցած է նախորդէն, բայց կը պահէ նոյն կոնաձեւ ձգտումը (նկ. 29):

Տիգրան Բ.ի եւ իր յաջորդ Արտաւազդ Բ.ի թագերուն հինգական ցցուած ծայրերը (peaks) անոնց չեն տարբերիր նախորդներու չորսականէն, քանի որ երկու պարագաներուն ալ անոնք տարբեր տեսանկիւններէ դիտուած ութական ցցուն ծայրեր պէտք է նկատել:

Իսկ եթէ ընդունելու ըլլանք որ երկու խումբերու թագերուն վերեւի ցցուած ծայրերը երեւցածին նման 4 եւ 5 հատ են եւ նկատի ունենանք որ գլխի բոլորակ շրջագծէն բարձրանալով թագը կազմած է ոչ թէ կը որ տարածութիւն մը, այլ ներքեւէն բարձրանալով երկու կողմերէն իրար միացած ուղիղ գիծ մը որը կը կրէ միայն միաշաքը ցցուած մասեր, այն ժամանակ ընդունելի կը դառնայ վերոյիշեալ վարկածը: Սակայն այս պարագային պէտք է նկատի ունենալ երկու կողմերուն վրայ նոյնանման երկու աստղաձեւ արեւ-վարդեակներ եւ չորս արծիւներ, որոնք մեզ կ'առաջնորդեն ոչ

տրամաբանական ենթադրութիւններու, քանի որ թագի երեւցած մասը եւ հակադիր կողմը չէին կրնար իրարմէ տարբերուիլ:

Արաժայր ցցուած մասերով թագ մը կը կրէ (նկ. 30) նաեւ Անտիոքի Տիչէ (Tiché) աստուածուհիի արձանը, թէեւ ճիշդ Արտաշէսեան թագերու հակառակ ուղղութեամբ՝ վերեւը լայն եւ կոնաձեւ նեղ-ցած մինչեւ ստորոտը:

Արտաշէսեան աւանդութեան հետեւող, սակայն աւելի բարձրադիր հայ «թագուհի»ի թագը (նկ. 31) որու վերեւի չորս ցցուն ծայրերը, մեր վերոյիշեալ դիտողութեան՝ ուղիղ գծով վերջանալու վարկածը քիչ մը կ'ամրապնդեն վերեւի մասի տափակ տեսքով: Հնարաւոր է նաեւ որ թագաւորական թագերը կը որ մակերեսով վերջանալով հանդերձ, հաւանաբար ուղիղ գծի վրայ տափակցած ձեւով կը վերջանային երկու կողմերէն աստղագաղղ Կանացի թագերը, որոնք հաւանաբար նպատակ ունէին թեթեւ ըլլալու եւ անոնց (թագուհիներու) հասակները աւելի սլացիկ ցոյց տալու:

Համաձայն Հ. Վարդան Հացունիի⁴⁸, Վիլթոր Լանգլուայ (V. Langlois) Փարիզի Մատենադարանի Վերոյիշեալ Կարկեհանի (rubis) վրայ քանդակուած հայ թագուհիի կենդանագիրը կը նկատէ Հայոց Երատոյ թագուհիինը, դատելով մագերու եւ դէմքի այն նմանութենէն որ կը տեսնէ Տիգրան Դ.ի քրոջ՝ Երատոյի դրամին դիմաքանդակին հետ համեմատելով: Ամէն պարագայի կասկածէ վեր է որ վերոյիշեալ Արտաշէսեան հայ թագուհիի մը դիմանկարն է:

Տիգրան Բ.ի այն հինգ դրամները, որոնց լուսանկարները եւ բացատրական գծանկարները (նկ. 32, 33, 34, 35, 36) ուսումնասիրելու պարագային անհրաժեշտ է նախ նկատի ունենալ այն կարեւոր հանգամանքը, որ նոյնութեամբ պահպանեցինք բոլոր մարգարտաշարերը, հորիզոնական եւ ուղղահայեաց, ընթերցողին աւելի հասկնալի դարձնելու համար մանրամասնութիւնները, թէեւ անոնց ոչ ամէնուրեք համոզիչ տեղադրութեան փոփոխութեամբ, այսինքն ուղղահայեաց մասերու մարգարտաշարերու վերացումով թագերու տեսքը աւելի ընդունելի եւ համոզիչ կը դառնան, ինչպէս այն ցոյց տուած եմ առաջին (նկ. 1) նկարագրողումով: Կեդրոնի արեւի (եւ ոչ աստղի) եւ երկու արծիւներու տեղադրումը սխալ է, եւ շատ աւելի համոզիչ կրնան ըլլալ ճակատի կողմէն դիտուած տեղադրումով: Համոզուած եմ որ արքայական փառքի այս երեք (արեւ եւ արծիւներ) խորհրդանիշներու թագի աջ կողմը տեղադրուելու գլխաւոր պատճառը կիսադէմ (profile) քանդակն է որի վրայ փորագրելը փափաքած է անպայման ցոյց տալ երեք վերոյիշեալ խորհրդանիշերը:

Տիգրանի ժամանակ արեւի պաշտամունքը շատ տարածուած էր Մերձաւոր Արեւելքի մէջ, իր արձագանքը գտնելով նաեւ Հայաստանի, եւ քիչ յետոյ Հռոմի մէջ:

Հայոց մէջ Արեւի պաշտամունքի մասին Մ. Սորենացի կը գրէ՝ «Մեհանս շինեալ յԱրմաւիր, անդրիս հաստատէ Արեգական եւ Լուսնի»⁴⁹, Հ. Ղ. Ալիշան եւս կը գրէ՝ «Հաւանօրէն Հին Հայք ուրիշ ազգաց պէս՝ նախ զԱրեգակն պատուած եւ պաշտած պիտի ըլլան՝ յերկինս, իր առերեւոյթ շրջանին մէջ, մանաւանդ ծագած եւ ծածկուած ատենն ի հորիզոնի, յետոյ բոլորակի ձեւով ներկայած...» «Հին վիպասանք մեր՝ ցուցնեն զնա իրենց «Երկներ Երկին, Երկներ Երկիր» երգով, որոց գործակից կ'ըլլայ եւ ծովն, որ կ'երկնէ կարմիր եղեգնիկ մի, ուսկից բոց ու կրակ կ'ելնէ, եւ անոնց միջէն կարմրիկ ու խարտեաչ պանանեկիկ մի կու վազէ կ'ելնէ, բոցեղէն մանրիկ աչքերով, եւ արեւակերպ: Այսպէս կարծեմ հաւտային եւ կերպարանէին կամ գոնէ հնարէին պաշտօնեայք եւ բանաստեղծք հայոց, որոց աւելի նորագոյնին՝ այն խարտեաչ պատանեկին անձնաւորեցին կամ ուղեցին ճանչնալ ի Վահագն...»⁵⁰:

Հայր Վարդան Հացունիի կարծիքով՝ «Արծիւը, որ զոյգ է, կանգնած բնական դիրքով, գլխին յետ շրջած դէպ ութճառագայթ աստղ մը՝ որ կայ իրենց մէջտեղ, եւ է արեգակն իսկ, պաշտուած երբեմն հայոցմէ եւս ու փառաբանուած Գողթան երգիչներէն...»⁵¹:

⁴⁸ Հ. Վ. Հացունի, Պատմութիւն Հին Հայ Տարագին, Վենետիկ, 1923, էջ 76:

⁴⁹ Մովսէս Սորենացի, Պատմութիւն Հայոց:

⁵⁰ Հ. Ղ. Ալիշան, Հին Հաւատք կամ հեթանոսական Կրօնք Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, էջ 95-96:

⁵¹ Հ. Վ. Հացունի, Հայ դրօշները Պատմութեան մէջ, Վենետիկ, Ս. Ղազար, 1919, էջ 29:

⁴⁸ Հ. Վ. Հացունի, Պատմութիւն Հին Հայ Տարագին, Վենետիկ, 1923, էջ 41:

⁴⁷ Herodotus, The Histories, Suffolk 1972, page 468:

Սակայն վերոյիշեալներէն շատեր մեր հետազօտած նիւթին հետ սերտօրէն կապ ունենալուն պատճառով, անոնցմէ ընտրեցինք 11 հատ, որոնց վրայ պատկերուած են Հայկական Արտաշէսեան թագեր, ինչպէս նաեւ զինուորական եւ ժողովրդական գլխանոցներ որոնց ձեւերը կապ ունին Արտաշէսեան թագերու հետ:

Ժամանակագրական կարգով մեզ ծանօթներուն առաջինը արժէքաւոր, սակայն արտասովոր դրամ մըն է, հատուած Մարկոս Անտոնիոսի (Marcus Antonius) կողմէ՝ Ք. Ա. 43–30 թուերու միջեւ, Հայաստանի Հռովմէական գրաւման առթիւ, ուր Armenia բառը գոյութիւն չ'ունի, այլ միայն երկրորդ կողմի վրայ կան Հայոց արքայական թագը, նետ եւ աղեղ: Առաջին կողմի վրայ ցցուն տառերով՝ Antonius, Augur, Consul Designatus Iterum et Tertio (Անտոնիոս, Քրմապետ, կոնսուլ նշանակուած երկրորդ եւ երրորդ անգամ), իսկ երկրորդ կողմի շուրջը՝ Imp. Tertio, III. Vir. R.P.C. (Իմպերատոր երրորդ անգամ, հանրապետութիւնը հաստատող եռապետութեան անդամ):

Թագը (խոյր) ունի եօթը (իսկ լրիւ չըջանակի վրայ՝ 12) ցցուն գազաթներ, իսկ վիժակի շուրջ մարգարիտներ: Արդեօ՞ք կեդրոնի աստղը նախորդներու նման արեւը կը խորհրդանշէ, այն հաւանական է, թէեւ, արծիւները չկան եւ փոխարինուած են աստղերով (նկ. 42):

Կայ նաեւ Օգոստոս կայսեր եւ Տիգրան Դ-ի դրամը (Ք. ա. 2 եւ Ք. ե. 1 թուերու միջեւ): Դրամի երկրորդ՝ Տիգրանի կողմը, դիմաքանդակին շուրջ՝ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ (Մեծն թագաւորի՝ Նոր Տիգրանին): Հնգագազաթ թագի վրայ մանրամասնութիւնները անորոշ են, վիժակը դէպի ետ եւ ականջին՝ օղբեր, ինչպէս նաեւ նախնեաց թագերու նման գլխակապ (նկ. 43):

Օկտավիանոս Օգոստոս (Ք. ա. 27 եւ Ք. ե. 14) ունի նաեւ այլ դրամներ Հայաստանի վերաբերեալ: Յաղթուած Հայ զինուորի անփառունակ կերպարը կը գրաւէ մեր ուշադրութիւնը իր գլխանոցով, նիզակով, նետով եւ մանաւանդ հագուստով (նկ. 44): Զինուորի երկու կողմերը կայ արձանագրութիւն՝ Caesar Divi Filius, Armenia Recepta, Imperator Nono (Կեսար, որդի աստուածային, Հայաստան վերստին նուաճեալ, ինքնակալ իններորդ անգամ):

Զինուորի գլխարկը ունի սուր ծայր եւ հաւանաբար ցուրտ կլիմայի պատճառով, ներքեւի սաղաւարտին վրայ կը կրէ բրդեայ կամ կաշուէ գլխանոց, վիժակով:

Նոյն Օգոստոս կայսեր այլ մէկ արծաթ դրամը իր առաջին կողմի վրայ կը կրէ իր դիմանկարը եւ անունը՝ Augustus, իսկ երկրորդ կողմի վրայ հայկական թագը, ոչ սովորականին նման քով նտի, այլ կունակէն դիտուած, հաւանաբար պարտութիւն խորհրդանշելու նպատակով այդ վիժակի մէջ քանդակուած, իսկ աջին՝ աղեղներ եւ զոյգ կապարճներ: Արձանագրութիւնը՝ Armenia Capta (Հայաստան նուաճեալ): Համաձայն Զ. Պտուկեանի այս դրամները հատուած են Ք. ա. 18 թուին (նկ. 45):

Առաջին կողմը Փերոնիայ չաստուածուհիին դիմաքանդակը կրող դրամին շուրջի արձանագրութիւնը՝ Publius Petronius Turpilianus Triumvir (Պուբլիոս Պետրոնիոս Տուրպիլիանոս, Նոապետութեան անդամ), իսկ երկրորդ կողմը՝ Caesar Divi Filius, Armenia Capta (Աստուածային Կեսարի որդին, Հայաստան նուաճեալ): Կեդրոնը քանդակուած է ծնրադիր, Հայաստանը ներկայացնող Կանացի կերպար մը, որը գլխին կը կրէ հայկական թագի եռածայր տարբերակ մը ուր մաշուածութեան կամ փոքրութեան պատճառով ոչ մէկ մանրամասնութիւն չ'երեւար, իսկ առաջ մեկնած ձեռքերը խնդրանք կը խորհրդանշեն (նկ. 46):

Ներոնի դրամներուն վրայ (թագաւորեց Ք. ե. 54–68 թուերուն) Հայաստանի պարտութեան ոչ մէկ նշան չ'երեւար եւ Mattingly⁵⁵ կ'ըսէ թէ Ներոն երբեք Armeniucus (Հայաստանի յաղթող) տիտղոսը չ'առաւ, այնպէս որ իր անունով հատուած Հայաստանի վերաբերեալ դրամներուն վրայի Armeniac արձանագրութիւնը, ըստ նոյն հեղինակի, պէտք է կարդալ Armeniaca: Վերոյիշեալ եւ այլ դրամներ կը կրեն Յաղթանակի խորհրդանշիչը, որը կը քալէ դէպի աջ եւ ձեռքը բռնած է պսակ մը, իսկ ձախին՝ արմաւենիի ճիւղ մը, խորհրդանշիչը խաղաղութեան: Վերոյիշեալ (Ք. ե. 54–68) թուերուն միջեւ կ'իյնայ Հայոց Տրդատ Ա. Արշակունի թագաւորին Հռովմ, Ներոնի այցելութիւնը Ք. ե. 66 թուին:

⁵⁵ Զարեհ Պտուկեան, Հայաստանի վերաբերեալ Հռոմէական դրամներ եւ մեդալիոններ, Վիեննա, Միխիթարեան տպարան, 1971, էջ 64:

Այլ էր Տրայանոսի (Ք. ե. 98–118) վերաբերմունքը Հայաստանի հանդէպ: Հաւանաբար Ք. ե. 114 թուի արեւելք արշաւանքին կը վերաբերի Տրայանոսի այն դրամը ուր առաջին կողմի վրայ քանդակուած է իր դիմաքանդակը՝ դափնեպսակով: Երկրորդ կողմը՝ դափնեկիր Դրայանոսը, կանգնած, աջ եւ ձախ կողմերը Տիգրիսի եւ Եփրատի չաստուածները, երկուքին մէջտեղը՝ Հայաստան, նստած դէպի ձախ, գլուխը յենած աջ ձեռքին, իսկ ձախ ձեռքով յենուած գետինին: Գլխին կը կրէ բարձրադիր հայկական գտակ: Շուրջը արձանագրութիւն՝ Armenia et Mesopotamia in Potestam, P. R. Redactae (Հայաստան եւ Միջագետք հռոմէական ժողովուրդին իշխանութեան ներքեւ, ծերակոյտի վճռով) (նկ. 47):

Հայաստանի տիրապետութեան հարցին ժամանակաւոր լուծման եւ Ներոնի յարաբերական բարեացակամութեան յաջորդեց Տրայանոսի նուաճողական աշխոյժ գործունէութիւնը: Այս մասին Կասիուս Դիոնի մօտ կը կարդանք՝ «Այնուհետեւ, նա (Տրայանոսը) ռազմերթի ելաւ Հայերի եւ Պարթեւների դէմ այն պատրուակով, որ Հայոց թագաւորն իր թագը իրենից չէր ստացել, այլ պարթեւաց թագաւորից.....»⁵⁶:

Բացայայտ էր որ Տրայանոս առիթը պիտի օգտագործէր իր նպատակադրած յարձակման սկսելու: Եւ Պարթեւաց թագաւորը պատգամաւորութիւն ուղարկեց անոր (Տրայանոսին) եւ «խնդրում էր նրան, որ Հայաստանը տրուի Բակուրի Պարթամասիր որդուն, ու թախանձագին խնդրում էր նոյնպէս որ սրան ուղարկուի թագը»⁵⁵:

Երբ Տրայանոս Սելեւկիա հասաւ, Պարթամասիրը նամակ գրեց անոր եւ այնտեղ ինքզինք Հայաստանի թագաւոր չ'անուանեց, որուն ի պատասխան առաջարկուեցաւ (Պարթամասիրին) որ ան ներկայանայ Տրայանոսին անձամբ:

Էլեգեյայի մէջ (Էրզրումի մօտ) Տրայանոսին ներկայացաւ Հայաստանի Պարթամասիր թագաւորը եւ «Կայսրը հանդիսաւոր կերպով ընդունեց նրան իր զօրքի ներկայութեամբ: Պարթամասիրը, Տրդատ Ա-ի օրինակին հետեւելով, արքայական թագը հանեց գլխից եւ դրեց Տրայանոսի ոտքերի մօտ, յուսալով, որ իր թագը ետ կ'ստանայ եւ կը ճանաչուի Հայաստանի թագաւոր: Սակայն Տրայանոսը մերժեց նրան տալ Հայաստանի գահը եւ յայտնեց, որ ինքն արդէն վճռել է Հայաստանը դարձնել Հռովմէական նահանգ»⁵⁶:

«Երբ Պարթամասիրն այս լսեց, այլ եւս չ'ուեց, այլ խօսեց մեծ համարձակութեամբ եւ ասաց, ի միջի այլոց, որ նա ոչ պատեհաբար մէջ է յաղթուել, ոչ էլ գերի է վերցուել, այլ եկել է կամաւոր կերպով, հաւատացած լինելով թէ իրեն որեւէ վիրաւորանք չ'են հասցնի եւ թէ ինքը կ'ստանայ իր թագաւորութիւնը»⁵⁷:

Այսպէսով, Ք. ե. 114 թուին Հայաստանը պաշտօնապէս դարձաւ Հռովմէական նահանգ եւ Փոքր Հայքն ու Մեծ Հայքը միանալով կազմեցին Հռովմի հպատակ մէկ նահանգ: Հաւանաբար այս առթիւ էր որ վերոյիշեալ (նկ. 47) դրամը հատուած էր: Իսկ Պարթամասիրը իրեն ուղեկցող Հռովմէացի եւ Պարթեւ զօրագուններու միջեւ ընդհարման ժամանակ սպանուեցաւ, թէեւ այլ աղբիւրներ կ'ըսեն թէ Տրայանոսի հրամանով գլխատուեցաւ⁵⁸:

Արշակունեաց թագի հարցի այս ժամանակաւոր եւ աննպաստ կարգադրութենէն քիչ յետոյ արշակունեաց թագեցան Հայաստանի եւ Հարաւի երկիրներու մէջ, որոնք դաժան կերպով ապստամբութիւններ ծագեցան Տրայանոսի Սելեւկեան գրաւուելով, երկու վերջինները հիմնադրուեցան եւ Մծբինը, Նոքսիան ու Սելեւկեան գրաւուելով, երկու վերջինները հիմնադրուեցան Հռովմայեցիներու կողմէն⁵⁹:

Տրայանոսի յաջորդ Հատրիանոսը (Hadrianus) «թոյլ տուեց որ Հայերն ունենան թագաւոր», մինչդեռ Տրայանոսի ժամանակ անոնք ունեցած էին տեղակալ (Legatus)⁶⁰:

⁵⁶ Յակոբ Մանանդեան, Քննական տեսութիւն Հայ ժողովրդի Պատմութեան, հատոր Բ, մասն Ա., Երեւան, 1957, Կ. Դիոն, էջ 22:

⁵⁷ Նոյն, Դիոն, էջ 23:

⁵⁸ Նոյն, Կ. Դիոն, էջ 24:

⁵⁹ Նոյն, Կ. Դիոն, էջ 25:

⁶⁰ Նոյն, Կ. Դիոն, էջ 26:

⁶¹ Նոյն, էջ 29:

⁶² Նոյն, Պարտիանոս, էջ 34:

հետապնդելով՝ կոտորեցին պարսից ամբողջ զորքը: Հայոց թագաւորը կոտորածից մեծ յաղթութեամբ, բազում աւարով եւ ցնծալի ուրախութեամբ վերադարձաւ Հայոց կողմերը.....»⁷¹: Համաձայն Հայր Յ. Տաշեանի եւ Աստուրեանի այս թշնամութիւնները տեւեցին մինչեւ Ք. ե. 238-էն 248:

Կարոս (Carus) կայսեր օրով (282–83) Հռովմ նորէն արշաւեց արեւելք եւ մտաւ Հայաստան եւ Պոսրով (Ա.) վերստին ճանչցաւ Հռովմի գերիշխանութիւնը եւ շատ հաւանաբար նորոգուեցաւ թագաւորութիւնը:

Կալերիոս Մաքսիմիանոս, Դիոկղետիանոսի զօրավարը, իր առաջին ամօթալի պարտութենէն յետոյ, պատերազմը շարունակեց մինչեւ 297 թիւը, զայն տեղափոխելով Հայաստանի լեռնային շրջանները, ուր իր ձեռքը գերի ինկան Սասանեան Ներսէս արքայի կանանոցը եւ ամբողջ ընտանիքը եւ Ներսէս շտապեց խաղաղութիւն կնքել:

Կնքուած խաղաղութիւնը, որը տեւեց քառասուն տարի, շատ նպաստաւոր եղաւ Հայաստանի խաղաղ բարգաւաճման համար, Տրդատ Գ.ի եւ անոր յաջորդ Պոսրով Գ.ի օրով: Նոյն արկածախնդրութիւնը կրկնելով երկրորդ անգամ, Ներսէս կրկին պարտուեցաւ Դիոկղետիանոսէն եւ ստիպուեցաւ աւելի ծանր եւ աննպաստ պայմաններով հաշտութեան դաշինք կնքել անոր հետ: Ըստ այդ պայմանագրի՝ «Հայաստանը ճանաչուեց իբրեւ Հռովմի հպատակ պետութիւն.....»⁷²:

Գոթերու (Goth) դէմ տարած յաղթանակին առթիւ Տրդատ Գ., գերի վերցուցած արքային կը յանձնէ Դիոկղետիանոսին (թագ. 284–305) եւ այս առթիւ՝ «...թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց» (298 Ք. ե.)⁷³: «Թագաւորեցուցանէ» բառը այստեղ պէտք է մեկնաբանել նաեւ որպէս թագաւորութիւն: Անգամ մը եւս յարգուած է Ներոն-Տրդատեան համաձայնութիւնը, հաւանաբար Հայոց թագաւորը թագադրելով Հռովմէն տրուած թագով:

Տրդատ Գ.ին յաջորդեց իր որդին՝ Պոսրով Գ. Կոստակը (330–338): Աղբիւրները լուր են Կոստակի թագ ստանալու մասին, եւ շատ հաւանաբար ան ժառանգեց նաեւ հօր թագը, մանաւանդ որ անոր թագաւորութեան շրջանը ներառեալ է քառասնամեայ այն խաղաղութեան տարիներուն երբ Հայաստան կը շարունակէր բարեկամ մնալ Հռովմի հետ, եւ Դիոկղետիանոսի ու Տրդատի բարեկամութիւնը շարունակուեցաւ Հայաստանի եւ Հռովմի Քրիստոնէութիւնը ընդունելէն յետոյ, Կոստանդին կայսեր ու Տրդատի միջեւ նոր բարեկամութեամբ:

Պոսրով Գ. Կոստակի յաջորդ Տիրան թագաւորի ժամանակաշրջանէն (338–350) ոչ մէկ տեղեկութիւն չենք գտած թագի մասին, թէեւ անոր Հռովմէասէր քաղաքականութենէն կրնանք ենթադրել որ նոր թագի հարց չէր կրնար գոյութիւն ունենալ եւ հաւանաբար գոյավիճակը շարունակուեցաւ, նկատի ունենալով որ ոչ մէկ լուրջ խզում տեղի չէր ունեցած Հայ-Հռովմէական յարաբերութիւններու մէջ:

Արշակ Բ.ի (350–368) թագի մասին ոչ մէկ տեղեկութիւն չ'ունինք: Մեզ միայն յայտնի է այն որ Կոստանդիոս Բ. (Constantius II.) Մեծն Ներսէսի գլխաւորութեամբ բանակցելու համար Պոլիս գացած Հայ պատուիրակութեան հետ «Թանկագին նուէրներ» ղրկած էր Արշակին⁷⁴: Յայտնի չէ այդ նուէրներու բովանդակութիւնը, գիտենք միայն որ Կոստանդիոս Արշակին այդ առթիւ ղրկած էր նաեւ իր հանգուցեալ Կոստաս եղբօր Նշանածին՝ Ողիմբիային որպէս հարսնացու: Պէտք է ենթադրել որ Հայոց թագաւորին թագուհիութեան թեկնածու եւ նուէրներ ղրկած ժամանակ, հաւանաբար զոյգ թագեր եւս ղրկած էր թագադրութեան համար:

Տրդատ Ա.ի եւ Ներոնի միջեւ սկսած քաղաքական սերտ կապերը այժմ կը զուգորդուէին նաեւ կրօնական կապերով, մանաւանդ Մեծն Կոստանդինի ժամանակ Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունուելէն յետոյ, եւ այս պատճառաւ Շապուհ Բ.ի բոլոր ջանքերը Արշակ Բ.ը սիրաշահելու եւ Հռովմի դէմ քրքրելու, դատապարտուած էին ձախողութեան:

⁷¹ Ագաթանգեղոս, Հայոց Պատմութիւն, Թարգմանութիւն Արամ Տէր Դեռնդեանի, Երեւան, 1983, էջ 27:

⁷² Հ. Մանանդեան, Քննական տեսութիւն Հայ ժողովրդի Պատմութեան, հատոր Բ, մասն Ա, էջ 110:

⁷³ Նոյն, Սեբէոս, էջ 113:

⁷⁴ Նոյն, էջ 159:

⁷⁵ Նոյն, Ամմիանոս, էջ 173:

Ամմիանոս (Ammianus Marcellinus – 330–395), ժամանակակից Արշակ Բ.ի, կը հաստատէ նաեւ որ Հռովմայեցիք «աշխատեցին փառայեղ հազուատներով ու բազմազան ընծաներով գնել (կաշառել) Հայաստանի Արշակին»⁷⁵:

Արշակի յաջորդ Պապ թագաւորը, նենգամտութեամբ Տարսոն (Tarsus) հրաւիրուելէն, ձերբակալուելէն ու փախչելէն յետոյ, կայսեր հրամանով դաւադրաբար սպանուեցաւ 394 թուին, Տրայանոս Զօրավարի կարգադրութեամբ, ոսկէ ըմպանակը ձեռքին, խնջոյքի ընթացքին, Հայ աւագանիի ներկայութեան, պաշարուած յոյն «պատուոյ պահակներով»⁷⁶: Իր կարճատեւ թագաւորութեան (370–374) ընթացքին Պապ ոչ ոք է թագ չէր ստացած:

Պապ թագաւորի եղբրական մահուանէն յետոյ Վաղես կայսրը Հայաստանի թագաւոր կարգեց Արշակունիներու տոհմէն պատանի Վարազդատին (374–378), անշուշտ այս առթիւ անոր չընորհելով Հայոց արքայական թագը գործածելու իրաւունքը:

Թէոդոսիոս Ա.ի (Theodosius I) ժամանակ Հայաստան Բաժնուեցաւ Յունաստանի եւ Պարսկաստանի միջեւ (մոտ. 384–387), թէեւ Ալէն Մարթենը, Մարկուարդը եւ ուրիշներ տարբեր կարծիք ունին եւ կ'ընդունին 390-ը որպէս բաժանման թուական⁷⁷:

Ղազար Փարպեցիի վկայութիւնը «եւ արքային պարսից Շապհոյ (Գ). կատարեալ զհայցուածս (նախարարաց) շնորհէր նոցայ թագաւոր Պոսրով (Գ.) անուն յազգէն Արշակունեաց: Քանզի նախ (ա)գոյն թագաւորն Հայոց Արշակ (Գ.) ունէր միահեծան ղթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց»⁷⁸: Արդեօք վերոյիշեալ Արշակ Գ.ը իր թագին վրայ կը կրէր «ամենայն աշխարհիս Հայոց» խորհրդանիշը՝ կրկնակի արծիւները: Հաւանաբար ոչ:

Պոսրովի (Գ.) մասին կը կարդանք՝ «եւ Շապուհ կապեաց թագ ի գլուխ նորա»⁷⁹:

Հաւանական է որ Արշակ (Գ.) իր յունական բաժնի Հայաստանի մէջ կը շարունակէր կրել Արտաշիսեան թագատեսակ մը՝ իսկ Պարսկական բաժնի Մեծ Հայաստանի մէջ Պոսրով (Գ.) իր Շապուհէն (Գ.) ստացած թագով, որը շատ հաւանաբար արտաշեսեանին նման չէր, թագաւորեց նորաստեղծ, թերեւ Սասանեաններուն հաճելի թագով մը:

Վռամշապուհ եղաւ վերջին Արշակունի թագաւորը արեւելեան Հայաստանի եւ իր օրով կատարուեցաւ Հայ գրերու գիւտը Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ: Տուեալ ժամանակաշրջանի թուականները անորոշ են Հայ պատմագրութեան մէջ:

Թ.- Ազգայինը արուեստի մէջ

Նրբ հարց կը ծագի ազգի մը արուեստի մասին, մարդիկ կը փորձուին սահմանագծել որոշ երկրի մը արուեստին շուրջ վերացական եւ մտացածին օղակ մը: Արդեօք կարելի է մեկուսացնել ազգային արուեստ մը, անոր զանալով որեւէ օտար ազդեցութենէ օգտուած ըլլալու հաւանականութիւնը: Արդեօք այդպիսի տեսակէտ մը կենսունակ է:

Նկատի ունենալով այն որ ազգերն ալ անհատներու նման ենթակայ են իրենց շրջապատի ազդեցութեան, անկարելի է գտնել ազգ մը որը կարողացած ըլլայ երբեւիցէ առանձնացած, մեկուսացած կեանքով բաւարարուիլ կամ յառաջդիմել: Յառաջդիմութեան նախապայմանն է որ ամէն նոր սերունդ իր նախորդին կիսատ թողած քաղաքակրթութեան շէնքին վրայ քար մը աւելցնէ, սատարելով ստեղծագործութեան անվերջ ընթացքին:

Ինքնաբոյս արուեստ գոյութիւն չ'ունի, բացի բնութեան կերտածէն, որը նոյնպէս ենթակայ է արեւի, ջրի, օդի եւ այլազան բնական ուժերու բերումին: Այս բոլորը բնութեան ենթակայ կը դարձնեն իր շրջապատին:

⁷⁶ Նոյն, Ամմիանոս, էջ 216–217:

⁷⁷ Նոյն, էջ 233:

⁷⁸ Ղազար Փարպեցի, Տփղիս, 1904, էջ 8:

⁷⁹ Փաւստոս Բիւզանդ, Վենետիկ, 1889, էջ 264:

Արուեստը փոխադրեցութիւններու օղակներէ կազմուած շղթայ մըն է որը իր զանազան հատուածներուն մէջ ստորաբաժանուած է օղակներու խմբակներու, ուր այդ օղակները, յարմարելով կլիմայական եւ նիւթական պայմաններուն, իրարմէ անջատաբար զարգանալով եւ դարբերու ընթացքին իրարմէ աստիճանաբար տարբերուելով կը կազմեն որոշ ինքնուրոյնութիւն մը որ իրենց կուտայ լուրջ ազգային դիմագիծ:

Ազգային դիմագծի այս կազմութեան ընթացքին, որոշ հաւաքականութիւններ, այս կամ այն պատճառով՝ աշխատանքի ընդունակութեամբ, ֆիզիքական ոյժով կամ երեւակայութեան մեծ թոխջով կը հասնին իրենց նպատակադրումին, մինչ այլ խմբակցութիւններ կը մնան նոյն վիճակի մէջ: Տիրող տնտեսական, աշխատանքային եւ մտաւոր վերելքի անբարենպաստ պայմանները յաճախ կ'արգելակեն յառաջդիմութիւնը:

Կենսունակ են այն ազգերը որոնք իրենց կորովով եւ խիզախութեամբ կը ներգրաւուին շրջակայ ազգերու յառաջդիմութեան սրընթաց արշաւանքին մէջ: Սորուիլ կարգապահ աշխատանքի կենցաղագիտութիւնը (ethics) գլխաւոր ազդակն է յառաջդիմութեան: Անշուշտ մեծ դեր կը կատարէ նաեւ զարգացած առեւտուրը, ստեղծելով տնտեսական բարիքներ:

Ազգային արուեստներու կազմաւորման մէջ մեծ դեր կը կատարեն նաեւ տուեալ երկրի բնական գեղեցկութիւնը եւ բարիքները, շինարարական նիւթեր՝ քար, փայտ եւ մետաղներ, որոնք մտաւոր թոխջին կուտան շօշափելի ներկայութիւն: Այս տեսակէտէն ուսանելի է Հայաստանի ճարտարապետութիւնը, որը բովանդակելով հանդերձ ազդեցութիւններ եգիպտական, յունական եւ այլ երկիրներու ճարտարապետութիւններէն, այնքան յառաջացած է իր ինքնուրոյն ստեղծագործութեան մէջ (եւ այնքա՛ն ազդած նաեւ այլ ազգերու նոյնանուն արուեստին վրայ) շնորհիւ երկրի տեղագրական (topographic) առանձնայատկութիւններուն եւ բնական հարուստ նիւթերուն, որ այժմ շատ իրաւացիօրէն կրնանք այն նկատել շատ ինքնուրոյն ազգային ճարտարապետութիւն մը:

Կազմակերպուած հաւաքականութիւններ, իւրացնելէ յետոյ այլ ազգերու մտածողական եւ ֆիզիքական յառաջդիմութեան մղիչ ուժը, կը սկսին կերտել, իրենց գոյութիւն ունեցող ազգայինին վրայ հիմնուած, այն նորը որը իւրացուցած էին փոխադրեցութեամբ: Այս բոլորը կը կատարուին ինքնուրոյնութեան, ինքնավստահութեան եւ ինքնայարգանքի ազնիւ զգացումներով շաղախուած, առանց դոյզն այլ ամբոժութեան ենթարկելու ինքզինքնին: Ստանալ եւ իւրացնել, իր ազգայինի ըմբռնումի բովէն անցնելով եւ ստեղծել ազգային արուեստ մը որը ունի սեփական ձեւ, բովանդակութիւն եւ նկարագիր:

Նոյն ազգին մէջ դարերով նուիրագործուած, յառաջդիմած եւ տուեալ ժողովուրդին կողմէ արդէն իւրացուած երեւոյթ մը ազգային է անցած ըլլալով այդ ազգի զգացումներու եւ սովորութիւններու բովէն եւ նոյնանալով անոնց հետ:

Նկատի ունենալով վերոյիշեալները, կրնանք հաստատօրէն յայտնել որ Արտաշեսեան թագերը հայ արուեստի արտադրութիւններ են եւ անոր գանձարանին անբաժանելի մասերը:

Ժ.- Ստուգում Արտաշեսեան թագերու

Մեր ուսումնասիրութեան այս հանգրուանին կրնանք եզրակացնել որ թագը (կամ խոյրը) ունի արեւելեան ծագում, քանի որ արեւմուտքի երկու յայտնի նախաքրիստոնէական հին քաղաքա-կրթութիւններու՝ յունականի եւ Հռովմէականի տեւողութեան ընթացքին թագեր չեն գործածուած, այլ միայն տերեւակերտ պսակներ: Թագը, որը կ'ենթադրուի թէ պէտք է պատրաստուած ըլլայ արժէքաւոր նիւթերէ՝ ոսկի, արծաթ, թանկագին ակներ, մարգարիտ, ինչպէս նաեւ բարձրորակ կերպասներ եւ կաշի, կը հակադրուի արեւմտեան քաղաքակրթութեան էականօրէն (intrinsèque) աժան, սակայն նոյնքան իմաստալից տերեւագարդ պսակներուն:

Յետագայ դարերու քրիստոնէական արուեստի սկզբնական շրջանին եւս, իր խաղիսափումի տարիներուն, նոր արուեստը հազաւ հեթանոսական արուեստի արտաքին պաճոյճները, որդեգրելով նաեւ տերեւագարդ պսակը, որպէս խորհրդանիշը քրիստոնէական հաւատքի յաղթանակի, միջին

ուղի մը որոնելով՝ Քրիստոսի փշխասակին ու հեթանոսական զանազան տերեւագարդ պսակներուն միջեւ եւ որդեգրելով զանգուածներուն տեսողական ունակութիւններուն աւելի հաճելի թափնեպսակը, որը յետագային փոխարինուեցաւ լուսապսակով:

Սակայն թագը աստիճանաբար մուտք գործեց քրիստոնէական արուեստի մէջ, երբ Հռովմէական կայսրութեան երկու մասերէն արեւելեանը՝ Բիւզանդիոն, իր աշխարհաքաղաքական (Geopolitique) դիրքին բերումով ազդուեցաւ Միջին Արեւելեան սովորութիւններէն: Մինչ այդ, նախաքրիստոնէական շրջանէն մինչեւ քրիստոնէութիւն առաջին նախաքայլերու ընթացքին, Հռովմէացիներ թէեւ թագեր բաժնեցին արեւելեան թագաւորներուն, յարգելով անոնց սովորութիւնները եւ այսպէսով անոնք փորձեցին համակրանք չահիլ արեւելքի մէջ, սակայն այդ սովորութիւնը խորթ նկատեցին իրենց գոյութիւն ունեցող բարբերուն հետ եւ այն չ'որդեգրեցին: Միայն արեւելքէն եկող քրիստոնէական կրօնի Հռոմ մուտքէն շատ յետոյ, աստիճանաբար որդեգրեցին նաեւ թագ գործածելու արեւելեան սովորութիւնը:

Ինչպէս նախապէս տեսանք, այլազան հնագոյն գլխանոցներ եւ թագեր միայն մասնակի եւ պատահական նմանութիւններ ունին Հայկական Արտաշեսեան թագերու հետ: Թագի եւ վիժակի համադրութիւնը, իր ամբողջական կերպարանքով, մենք կը տեսնենք միայն Հայկական Արտաշեսեան թագի վրայ:

Միակ թագը որ բաւական նմանութիւն ունի Արտաշեսեանին հետ, այդ Կոմմագենէի մէջ օգտագործուածն է, որը փաստօրէն Հայաստանի անջատուած մասի, Կոմմագենէի թագն է:

Անտիոքոս Ա. եւ իր հայրը Միհրդատ քանդակուած են Հայկական Արտաշեսեան թագերու սլացիկ, չափազանցուած, սակայն հիմնականին մէջ նոյնի շրջագծային կառուցուածքի սկզբունքով: Կամ Կոմմագենեան թագը աւելի բարձր քանդակուած է Արտաշեսեանին հակադրուելու եւ անկէ գերադաս նկատելու ձգտումով, եւ կամ երկու թագերը կը սեռին նոյն նախատիպարէն: Սակայն երբ նկատի ունենանք որ Արտաշէս Ա. սկսած է թագաւորել Ք. ա. 190-էն սկսեալ, իսկ Կոմմագենեան թագաւորութիւնը անկէ 28 տարի յետոյ՝ Ք. ա. 162-ին, եւ Արտաշեսեան թագը աւելի նման է Ջարէհ Ա.ի թագին, այն ժամանակ կը փորձուինք Արտաշեսեանը նկատել աւելի հարազատ:

Համոզուած ենք որ Անտիոքոս Ա.ի դրամը (նկ. 17) իր Տիգրան Բ.ի եւ Արտաւազդ Բ.ի թագերուն շատ նման շրջագծով թագաձեւով, ինքզինք վերոյիշեալ երկուքին փոխարինելու փառատենչութեան արդիւնքն է, թէեւ չէ համարձակած գլխակապը ընդօրինակել:

Կասկածէ դուրս է Անտիոքոս Ա.ի (Ք. ա. 69–34) նրուանդունի ծագումը եւ Կոմմագենէի Փոքր Հայքի հարաւային մասնիկը ըլլալը: Նեմրուժ Տաղի յուշարձանային համալիրը հաւանաբար կառուցուած է Տիգրան Մեծի մահուրէն (Ք. ա. 55) յետոյ, մինչեւ Անտիոքոս Ա.ի մահը (Ք. ա. 34): Արտաւազդ Բ.ի տիրապետութեան յարաբերաբար խառնակ ժամանակաշրջանէն օգտուելով, Կոմմագենեցի Անտիոքոս Ա.ը ներթափանցած էր մինչեւ Վանայ Լճի արեւմուտքը, օգտուելով Մարկոս Անտոնիոսի Արտաւազդ Բ.ի դէմ ունեցած թշնամութենէն:

Հռովմէական միջամտութիւնը արեւելքի մէջ եւ այդ պատճառով Մակեդոնական–Սելեւկեան, ինչպէս նաեւ Պարթեւ Արշակունիներու աստիճանական վերացումը քաղաքական եւ ռազմական ասպարէզէն, աղիտալի հետեւանքներ ունեցաւ Միջին Արեւելքի ժողովուրդներու համար եւ անոնց զրկեց Մակեդոնական–Հելլենիստական քաղաքակրթութեան բարիքներէն: Հռովմէական կողմէ պոտեններն ու աւերածութիւններն են պատճառը, որ մենք այսօր մեր տրամադրութեան տակ չ'ունինք այն բոլոր նիւթերը որոնցմով պիտի կարենայինք աւելի ձեռնհասօրէն վերականգնել մեր գեղարուեստական անցեալի պատմութիւնը:

Տիգրան Մեծի մահէն մինչեւ նախավերջին Արտաշեսեան թագաւորը՝ Տիգրան Գ., Հռովմայեցիներ իրենց դրամներուն վրայ կը ճանչնան Արտաշեսեան թագը (թէեւ առանց արժիւններու) որպէս Հայոց օրինական եւ վաւերական թագը: Իսկ Ներոն Կայսեր եւ Հայոց Տրդատ Ա.ի կողմէ սկսուած նախընթացով, Հռովմայեցի Կայսրեր, մինչեւ Դիոդոսիոս (Theodosius) թագ կրելու իրաւունք չ'որհեցին Արշակունի Տրդատ Ա.էն մինչեւ հաւանաբար Հայաստանի երկու մեծ տէրութիւններու միջեւ բաժանումէն յետոյ յունական բաժնի Հայոց վերջին թագաւոր Արշակ Գ.ին: Իսկ իրենց գրաւման դրամներուն վրայ, գոնէ մինչեւ Բ. դարու վերջերը պատկերելով Հայկական թագը եւ ժողովրդական գլխանոցը:

Արտաշեսեաններու ժամանակակից Կոմմագենի թագաւորութեան մէջ գործածուած թագերը կը ձգտին վերոյիշեալներուն նմանելու, սակայն չ'ունին այն կոնաձեւ կառոյցը որը կը բնորոշէ Արտաշեսեաններու թագերը եւ Կոմմագենեան թագերու բարձր կառոյցը, յստակ քաղաքական մըր-ցակցութեան արդիւնք է:

ԺՊ.- Եզրակացութիւն

Արտաշեսեան թագերը հաստատօրէն կը սեռին Հայկական ժողովրդական գլխանոցներէն, եւ թէեւ իրենց անջատ մասերուն մէջ ունին որոշ նմանութիւններ Ուրարտական վիժակին եւ Ասորա-կան գլխանոցին, սակայն անոնց ընդհանուր ձեւաւորումը ուրոյն է եւ փոխառութեան արդիւնք չէ:

Վերոյիշեալ թագերուն կազմութեան նիւթերը նկատի ունենալու համար նախ պէտք է հաշուի առնել անոնց ծանրութիւնը եւ ըստ այնմ գնահատել կամ ենթադրել անոնց նիւթերը, հաւանաբար՝ կաշի, մետաքս, թաւիչ, ոսկի կամ արծաթ, թանկարժէք ակներ եւ մարգարիտ:

Միշտ հաշուի առնելով մարդկային գլխի չափերը եւ դիւրաշարժութեան հնարաւորութիւնները, որպէս ծանր նիւթ այնտեղ նկատի ունենալ նուազագոյն չափով ոսկի, միայն ներքին կառոյցի եւ արտաքին զարդերու համար:

Նկատի ունենալով հին Հայոց մէջ մուտք գործած արեւապաշտութիւնը, որու մասին կը վկայէ Մ. Ոորենացի եւ նոյն կարծիքը կը յայտնէ նաեւ Հ. Ղ. Ալիշան (Հին հաւատք Հայոց), թագի երկու արծիւներու մէջտեղի ութ թերթերով վարդեակը, իր ճառագայթանման վերջաւորութիւններով, ընդունիլ որպէս հին Հայոց պաշտած կուռքերէն՝ Արեւ աստուծոյ կերպարը, որը յետագային որպէս զարդ-վարդեակ, ընդհանրացած է հայկական քրիստոնէական ճարտարապետութեան մէջ տաս-ներկու թերթերով, հաւանաբար խորհրդանշելով տասներկու առաքեալները:

Թագի վերեւի ութ ցցուն մասերը նկատել խորհրդանշելը հեթանոս Հայաստանի ութ ամե-նայայտնի մեհեաններուն, որոնք սխտեմատիկ կերպով հիմնադրուած են Սուրբ Գր. Լուսաւորչի նախաձեռնութեամբ, եւ նկատի ունենալ վարդեակի ութ թերթերու կամ ճառագայթ-ներու եւ թագի ցցուն մասերու միջեւ իմաստի կապ կամ նոյնութիւն:

Վարդեակ-Արեւի երկու կողմերու արծիւները նկատել խորհրդանշելը Մեծ եւ Փոքր Հայքերու եւ անոնց նոյն թագի վրայ տեղադրումը նկատել Միացեալ Մեծ Հայաստանը խորհրդանշող եւ որը իրագործուած էր Տիգրան Բ.ի օրօք:

Արեւի եւ երկու արծիւներու թագի ճակատամասը մեր վերատեղադրումը նկատել տրամաբանա-կան, հաշուի առնելով որ անոնց մէկ կողմի (աջի) վրայ երեւալը պիտի նշանակէր նաեւ նոյնի կրկնութիւնը միւս կողմի (ձախի) վրայ, կրկնապատկելով արծիւներու թիւը, որոնք, այս պարա-գային, բացի զարդարանքէ ալ նպատակի չափի ծառայէին, եւ ոչ մէկ իմաստ չափի վերագրուէր իրենց:

Անհրաժեշտ է Արտաշեսեան թագերը նկատել միակ հայկական ազգային թագերը, քանի որ յետագայ դարերուն օգտագործուած թագերու մասին իրեղէն կամ մատենագրական որեւէ աղբիւրէ տեղեկութիւններ չ'ունինք, բացի Գագիկ Բագրատունիի Անիէն գտնուած արձանէն, որը, հաւանա-բար քաղաքական դրդապատճառներով, փաթկող մը կը կրէ եւ Գագիկ Արծրունիի որմաքանդա-կէն, ուր գլխի թագը կը յիշեցնէ Սասանեան Շապուհ Ա.ի դրամի վրայի թագը: Իսկ Ռուբինեան եւ Լուսինեան հարստութեանց թագաւորներու կրած թագերը, իրենց ընդհանուր ձեւով, արեւմտա-եւրոպական թագերու վերադարձութիւններ ըլլալով, շատ քիչ հայկականութիւն ունին իրենց ներքին յարդարումներուն մէջ:

Տիգրան Բ.ի թագին շատ նման Անտիոքոս Ա.ի թագը պէտք է նկատել մրցակցութեան արդիւնք եւ միամիտ ձգտում տիրելու ամբողջական Հայաստանին, Տիգրան Բ.ի անյաջողութիւններէն յետոյ: Արտաշեսեան աւանդական թագին նմանը կրելով, Անտիոքոս կը փորձէր չահիլ Հայ ժողո-վրդի մեծամասնութեան համակրանքը, որը շատ հաւանաբար չէր վայելած:

ՀԱՅԿ ՏԵՐ ԴԵՒՈՆԴԵԱՆ

ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄՆԵՐ

- 1.- Համադրական տիպար Արտաշեսեան թագերու: Այս թագը եւ յետագայ բոլոր գրչանկարները Հայկ Տէր Ղեւոնդեանի:
- 2.- Աղուրնազիրբալ II (859–833 Ք. Ա.) (Ashurnasirpal) Pritannica, Micropaedia, Vol. I. bage 582.
- 3.- Թըզլատբաղասար III (745–727 Ք. Ա.) Tiglath-Pileser III Britannica, Macropaedia, Vol. 18, page 401:
- 4.- B. B. Piotrovskii, Urartu, New-York 1967, page 65, ill. 44.
- 5.- Same, page 28, ill. 15.
- 6.- 6*, 6*, page 13, ill. 3, Armenian.
- 7.- Տարիոս Ա. (522–486 Ք. Ա.) Darius I, Jean-Louis Huot, Persia I, Geneva 1965, ill. 35.
- 8.- Guard Same, ill. 37.
- 9.- Charles Seltman, Masterpuces of Greek Coinage Oxford, bage 39, ill. 11*, Athena.
- 10.- C.H.V. Sutherland, Art in Coinage, London, page 54, ill. 30.
- 11.- Autophradates I. 3 JH. v. Ch?, Robert Göbl. Antike Numismatik, band 2, p. 160.
- 12.- Antiochus I., Helmut Waldman. Die Kommagenischen Kultreformen.
- 13.- Antiochus I. crown same.
- 14.- Same, tafel xxvii.
- 15.- Միհրդատ I (Mithradatis I Kallinikos und Herakles), tafel XXXI, same.
- 16.- Սելենէ (Selene) same, tafel XXVII.
- 17.- Անտիոքոս I, tafel I, same.
- 18.- Զեւս-Սրամազդ (Zeus-Oromasdes) same, tafel XVIII.
- 19.- Տիրիբազ (Tiribazus). Հայ ժողովրդի Պատմութիւն, Երեւան, 1971, 1 հատոր, էջ 454:
- 20.- Երուանդ, նոյն, հատոր 1, էջ 453:
- 21.- Արշամ, հր. Վ. Հացունի, Պատմութիւն Հին Հայ Տարագին, Վենետիկ, 1923, էջ 48–49, ներ-դիր:
- 22.- Զարէհ, նոյն, էջ 48:
- 23.- Զարէհ Թագակիր, Պ. Պտուկեան, Արտաշեսեան հարստութեան դրամները, Վիեննա, 1983, Plate 1.
- 24.- Փոխազգի գինուոր, հր. Վ. Հացունի, Պատմ. Հին Հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 41, ձեւ 9:
- 25.- Փոխազգի մենամարտիկներ, նոյն, էջ 42, ձեւ 10:
- 26.- Արտաշէս Ա., Paul Z. Bedoukian, Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, Plate I, No. 2.
- 27.- Տիգրան Ա., նոյն, Plate I, No. 4.
- 28.- Տիգրան Բ., Երեւանի Պատմական Թանգարանի Հաւաքածոյ:
- 29.- Տիգրան Բ., նոյն հաւաքածոյ:
- 30.- Անտիոքի Տիշէ աստուածուհին, Histoire Universelle des Arts, L'art Antique par G. Contenau-V. Chapot, paris, 1930, p. 282.
- 31.- Հայ թագուհի, հր. Վ. Հացունի, Պատմ. Հին Հայ Տարագին, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, ձեւ 34:
- 32.- Տիգրան Բ. – Paul Z. Bedoukian, Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978.
- 33.- Տիգրան Բ., Երեւանի Պատմական Թանգարանի Հաւաքածոյ:
- 34 եւ 35.- Տիգրան Բ. – Paul Z. Bedoukian, Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, Plate 2, No.No. 16 e 24.
- 36.- Տիգրան Բ., նոյն, Plate 3, No. 41.
- 37.- Տիգրան Գ. Կրտսեր, հր. Վ. Հացունի, Պատմութիւն Հին Հայ Տարագին, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, ներդիր Բ:

- 38.- Արտաւազդ Բ., Երեւանի Պատմական Թանգարանի Հաւաքածոյ:
- 39.- Արտաւազդ Բ., հր. Վարդան Հացունի, Պատմութ. Հին Հայ Տարագին, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, ձեւ 21:
- 40.- Երատոյ Թագուհի Հայոց, նոյն, ձեւ 33, էջ 77:
- 41.- Հայաստան Իշխանական Տարագով, նոյն, ձեւ 36, էջ 81:
- 42.- Մարկոս Անտոնիոսի արծաթէ դրամը Հայկական Թագով: Ջարէհ Պտուկեան, Հայաստանի վերաբերեալ Հռոմէական դրամներ եւ մեդալիոններ, Վիեննա, Միլիթարեան տպարան, 1971, էջ 32:
- 43.- Օգոստոս Կայսեր եւ Տիգրան Դ-ի դրամը: Նոյն, էջ 17:
- 44.- Հայ գինուորի կերպարը: Նոյն, էջ 49:
- 45.- Օգոստոս Կայսեր Հայկական Թագով դրամը: Նոյն, էջ 50:
- 46.- Հայաստանը ներկայացնող Կանացի կերպար, նոյն, էջ 53:
- 47.- Տրայանոսի Հայաստանի եւ Միջագետքի վերաբերեալ դրամը, նոյն, էջ 74:
- 48.- Հայաստանը խորհրդանշող արու կերպար, գլխանոցով, նոյն, էջ 83:
- 49 եւ 50.- Հայաստանը խորհրդանշող Կանացի կերպարներ, նոյն, էջ 101:
- 51.- Հայ Կանացի կերպարանք, նոյն, էջ 110:
- 52.- Հայ Կին, արտաշխան Թագերու շրջագծով գլխանոցով, նոյն, էջ 190:
- 53.- Դրամ Վաղարշակ Բ-ի (Պարթեւ Արշակունի) Թագաւոր 105-147 Ք. ե.: Հաւաքածոյ Հայկ Տէր Աւետիքեանի:
- 54.- Տիգրան Բ-ի Թագերու միջին ձեւ, գծանկար՝ Հայկ Տէր Աւետիքեանի:
- 55.- Արտաւազդ Բ-ի Թագերու միջին ձեւ, գծանկար՝ Հայկ Տէր Աւետիքեանի:
- 56.- Թագի վերեւի ցցուն մասերու բացատրական գծագրութիւն:


ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1.- Աբրահամեան, Վ. Ա.- Հայկական Ոսկերչութիւն, Երեւան - 1983:
- 2.- Ալիշան, Ղ.- Հայաստան նախ քան զՀայաստան, Վենետիկ, Ս. Ղազար - 1905:
- 3.- Ալիշան, Ղ.- Սիսական.- Վենետիկ, Ս. Ղազար, 1893:
- 4.- Ալիշան, Ղ.- Քաղաքական Աշխարհագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար - 1853:
- 5.- Աճառեան, Հրաչեայ.- Հայոց անձնանունների Բառարան: Հինգ հատոր, Երեւան - 1942-1962:
- 6.- Աւագրէկեան Թ.- Միհրը Հայոց մէջ, Վիեննա - 1929:
- 7.- Երեմեան Ա.- Հայաստանի Ատլաս, Երեւան:
- 8.- Երեմեան Ա.- Հայաստան ըստ աշխարհացոյցի, Երեւան - 1963:
- 9.- Թորամանեան, Թ.- Հայկական ճարտարապետութիւն, Երեւան - 1948:
- 10.- Թումանով, Կ.- Հայաստանի Որոնդեանները, թրգմ. հր. Մ. Ագեան: Վիեննա - 1970:
- Կարրիէր, Ա.- Հեթանոս Հայաստանի ութ Մեհեաններն, Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացիի համեմատ: Թարգմ. Տաշեան, հր. Թ.- Վիեննա - 1899:
- 12.- Հացունի, Վ.- Հայ դրոշները Պատմութեան մէջ: Վենետիկ - Ս. Ղազար - 1930:
- 13.- Հացունի, Վ.- Ճաշեր եւ խնջոյք Հին Հայաստանի մէջ: Վենետիկ, Ս. Ղազար - 1912:
- 14.- Հացունի, Վ.- Պատմութիւն հին Հայ տարագին: Վենետիկ, Ս. Ղազար - 1923:
- 15.- Հիւբշման Հ.- Հին Հայոց տեղւոյ անունները: Վիեննա - 1907:
- 16.- Մանանդեան, Թ.- Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները: Վիեննայ - 1928:
- 17.- Մանանդեան, Թ.- Քննական տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան: Երեւան - 1944:
- 18.- Մովսէս Խորենացի.- Հայոց Պատմութիւն, Երեւան, 1961:
- 19.- Յակոբեան, Յովհ.- Ուղեգրութիւններ. հատոր Ա-Զ., Երեւան - 1932:
- 20.- Յովսէփեան, Գ.- Մի էջ Հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից: Հալէպ - 1930:

- 21.- Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տիգրեական. 1885:
- 22.- Ստեփանոս Տարօնեցի, Պատմութիւն Տիգրեական: Պետերբուրգ. 1885:
- 23.- Վարդան Բարձրեբրդցի, Պատմութիւն Տիգրեական: Մոսկուայ - 1861:
- 24.- Տաշեան, Թ., Արշակունի դրամներ: Վենետիկ, Ս. Ղազար, 1961:
- 25.- Քիւրտեան, Թ., Գոհարներու պատմութիւնը Հայոց մօտ, նիւթեր հայ վաճառականութեան պատմութեան համար:
- 26.- Ancient bronzes, ceramics and scals. Glenn Markoe, editor. Published by the Los Angeles. County Museum of Art. Los Angeles, 1981.
- 27.- Avedissian, Ó., Peintres et sculpteurs Armeniens. Le Caire - 1959.
- 28.- Banks, Florence Aiken, Coins of Bible days. New York - 1957.
- 29.- Baltrušaitis, Jurgis., Le problème de l'Ögive et l'Arménie. Paris.
- 30.- Borissavlievitch. Essai critique sur les principales doctrines relatives a l'esthétique de l'architecture. Paris - 1925.
- 31.- Boucher, François. 20.000 years of fashion. New York.
- 32.- Der-Nersessian, S., Armenian Art. Thames and Hudson, 1978.
- 33.- Fontenoy, E., Les bijoux anciens et modernes. S^u de propagation des livres d'art. 1887.
- 34.- Godard, A., L'art de l'iran. Paris - 1962.
- 35.- Larousse, P., Grand Dictionnaire Universel, Paris.
- 36.- Macler, Frederic, La France et l'Arménie à travers l'art et l'histoire. Paris - 1917.
- 37.- Maiuri, Amedeo. Roman Painting. New York.
- 38.- Maspero, G. Essais sur l'art Egyptien. P. Guilmoto s. d. - 1912.
- 39.- Perrot, G. History of Art in antiquity, serie II. History of Art in Persia.
- 40.- Plutarch. The lives of the noble Grecians and Romans, New York.
- 41.- Persian Art., An illustrated souvenir of the exhibition of Persian Art at Burlington House. London - 1931.
- 42.- Piotrovski, B. B., Urartu. New York - 1967.
- 43.- Pope, A. U., Masterpieces of Persian Art. New York, 1945.
- 44.- Pottier, E., L'art Hittite, Paris - 1926-31.
- 45.- Roger-Milès, L., Comment discerner les styles, Architecture et décoration. Paris.
- 46.- Reau, L., Histoire Universelle des Arts. 4 tomes - Paris 1930-1939.
- 47.- Rice, D. T., Art Byzantin, Paris-Bruxelles 1959.
- 48.- Santa Barbara Museum of Art. Auction of the collection of ancient coins. Paul C. Mills. dir. Beverly Hills, 1975.
- 49.- Suetonius. The Awelve Caesars. Printed in Great Britain - 1957.
- 50.- The Cambridge Ancient History. vol. X. The Augustan Empire. Cambridge - 1934.
- 51.- Arakelian, B., Garni, Yerevan - 1957.
- 52.- Orbeli J. A. y Trever, K. B., Sassanidskii Metall. Moskva-Leningrad - 1935.
- 53.- Chubinashvili, G., Gruzinskoé Chekannoé Iskustvo. Tbilissi - 1959.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Լուսանկարները, գծանկարները եւ ձեւաւորման զարդանկարները հեղինակ Հայկ Տէր Աւետիքեանի:



ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՐԲԱՅԱՏՈՂՄԻ ԹԱԳԵՐԸ
ԵՒ ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԸ






նկ. 1



նկ. 4




նկ. 2




նկ. 3



նկ. 5

6^ա

նկ. 6

նկ. 6^բ

նկ. 7



նկ. 8



նկ. 9




նկ. 10



նկ. 11



նկ. 12



նկ. 13



նկ. 14



← նկ. 15

նկ. 16 →



նկ. 18



նկ. 17



նկ. 19



նկ. 20




նկ. 21




նկ. 22



նկ. 23



նկ. 24



նկ. 25

նկ. 26 →



← նկ. 27



նկ. 28



նկ. 29



նկ. 30



նկ. 31



Նկար 32. Դրամ ՄԵԾՆ Տիգրան Բ.ի (Երևանի Պատմ. Թանգ. No. 157): Արևի
 ճառագայթներու դիտումէն կը պարզուի որ փորագրիչ վարպետը սկսած է փորա-
 գրել ութ ճառագայթներ, սակայն ձախ կողմի ճառագայթներու սխալ տեղադրումը
 պատճառ դարձած է որ երկու ճառագայթ եւս աւելցնէ պարսպապիւնները լեցնելու
 եւ ամփոփ ցոյց տալու համար արեւի ձեւը:



Ֆկ. 33



Ֆկ. 34




Ֆկ. 35



Ֆկ. 36



Ֆկ. 37



Ֆկ. 38




Ֆկ. 39



Ֆկ. 40



Ֆկ. 41



նկ. 42



նկ. 43




նկ. 44



նկ. 45



նկ. 46



նկ. 47



նկ. 48



նկ. 49





նկ. 50





նկ. 51




նկ. 52



Ֆկ. 54



Ֆկ. 55



← Ֆկ. 53

Ֆկ. 56

LES COURONNES ROYALES DE LA DYNASTIE DES ARTAXIADES D'ARMÉNIE ET LEUR ORIGINE

Introduction

Les sociétés humaines, composées de communautés et de nations, ont toujours eu leurs emblèmes sous la forme d'armoiries et de drapeaux.

Nos efforts pour trouver le plus ancien emblème de l'Arménie nous ont conduits vers les monnaies des rois Tigrane II et Artavazdes II, trouvant sur leurs couronnes des emblèmes qui, tout en symbolisant leurs actions, sont aussi sûrement des emblèmes nationaux.

En avançant dans notre étude, nous avons essayé de trouver la signification de certains détails qu'il est possible de considérer en liaison avec la politique et la religion du temps.

Quoique nous sommes habitués à juger les grandeurs du point de vue de la force brutale, nous avons essayé, dans cette étude historico-artistique, de juger les Artaxiades comme des rois qui ont essayé de jouer un rôle civilisateur et d'inspirer l'esprit de la liberté nationale à leur peuple. Et si leur oeuvre n'avait pas rencontré l'antagonisme de la force brutale romaine, l'étude de l'art et de la culture arméniens auraient, en général, avancé plus aisément.

Je n'ai pas la prétention d'avoir accompli une oeuvre d'ensemble parfaite, puisque nous pouvons toujours espérer que les prochaines découvertes archéologiques en Arménie historique peuvent nous fournir des éclaircissements dans l'avenir.

I. Les couronnes (ou tiaras) durant l'histoire

Les couronnes ou tiaras ont, comme symboles d'autorité, cinq mille ans d'histoire. Les plus anciennes sont les tiaras de la Haute et de la Basse Égypte, dont l'unification par Narmer créa la tiare de l'Égypte unie, toujours aussi haute que les deux anciennes. La hau-

teur des tiaras était intentionnelle, pour créer artificiellement un air de supériorité, obtenir et garder l'autorité acquise.

Dans la Grèce antique et Rome, les formes initiales des couronnes étaient formées de feuilles de laurier, d'olivier et de baie, et selon Homère (Illiade XIII, 736) elles étaient seulement décernées aux dieux et aux armées. Plus tard, ces couronnes seront décernées aux lauréats des concours sportifs, littéraires et artistiques.

Ce symbole d'honneur, de victoire et de la gloire Romaine fut plus tard considéré comme un symbole glorifiant des martyrs chrétiens et de la victoire de leur foi.

Une autre forme, le demi-soleil, est portée par certains empereurs romains sur leurs monnaies. Ces rayons, symbolisant le dieu-soleil, ont sûrement leur origine dans les moeurs du Moyen-Orient, où l'adoration du soleil était très répandue.

Les couronnes et tiaras ont été utilisées durant les premiers siècles de l'art chrétien où la Sainte Vierge couronnée est appelée «La reine du Ciel». La tonsure des moines aussi symbolise un sacrifice à la mémoire du Christ couronné d'épines.

Il est supposé que l'or employé pour la confection des couronnes donne au porteur une autorité politique et militaire. Dans l'antiquité, quand il était extrêmement difficile de tailler les pierres les plus précieuses (diamant, saphir, rubis et émeraude), on employait surtout le lapis-lazuli (arménide), la turquoise et les perles naturellement formées.

Comme ailleurs, l'Arménie aussi a eu des tiaras dynastiques. Sur les monnaies de la plus ancienne dynastie royale arménienne des Artaxiades (Ils. av. J. C. jusqu'au I s. A. D.) nous remarquons les belles tiaras d'Artaxias, Tigrane II et autres.

Malheureusement, c'est tout ce qui nous reste et nous n'avons pas de monuments ou aculptures pour apprécier leurs costumes. Tout a été systématiquement détruit par les romains.

Dans ce but, nous avons entrepris l'étude des monnaies et monuments d'art des siècles antécédents d'Arménie et des pays avoisinants, pour pouvoir étudier plus sérieusement les origines de la tiare royale arménienne et son développement.

La destruction est un fait courant dans l'histoire des dynasties qui se succèdent, ou les emblèmes royaux et même nationaux sont détruits pour être remplacés par ceux du victorieux, pour se débarrasser du souvenir de la présence encombrante du vaincu et de ses symboles.

II. Les couvre-chefs pré-Artaxiade

Avant l'étude des tiars de la dynastie des Artaxiades, il est indispensable de connaître les couvre-chefs des pays avoisinants qui ont certaines ressemblances partielles avec les couronnes-tiars artaxiades.

A cette intention, nous avons trouvé qu'il était convenable de dessiner une forme moyenne, une synthèse de toutes les tiars artaxiades disponibles, parmi lesquelles il y avait certaines différences proportionnelles. Nous considérerons cette synthèse comme un type modèle sur lequel sera basé notre étude, et nous comparerons celles des nations avoisinantes avec notre tiare-synthèse (ill. 1).

A cette occasion, nous avons rectifié «l'erreur», que nous considérons fondamentale et qui consiste à placer le soleil et les deux aigles sur la droite de la tiare, qui est le résultat du fait que la tête du roi est toujours tournée vers la droite, en profil. Nous sommes convaincus que le soleil et les deux aigles étaient placés sur le front, mais dans la position actuelle de la tiare, en les plaçant sur le front, montrerait la moitié du soleil et un seul aigle, empêchant ainsi de montrer entièrement l'emblème com-

me le figuraient le maître-graveur et le monarque (ill. 1).

En comparant cette couronne-synthèse avec les couvre-chefs d'Assurnazirpal II (ill. 2), de Tiglath-Pileser III (ill. 3), du dieu Teisheba d'Ourartou (ill. 4), une statuette en bronze Ourartienne (ill. 5), la tête d'un arménien sur les bas-reliefs de Persépolis (ill. 6), Darius I (ill. 7), d'un garde Persan (ill. 8), la déesse Athena (ill. 9), du satrape Tissaphernes (ill. 10), et d'Autophradates I (ill. 11), nous avons trouvé peu de ressemblances et beaucoup de différences.

Toutes les comparaisons nous ont convaincu que la custode et les couvre-oreilles étaient spécifiques pour les pays froids, et n'étaient pas employées en Assyrie et une partie de la Perse.

De ce fait, nous pouvons réduire les pays chauds du sud de l'Arménie de notre liste d'influence et lier la tiare-couronne arménienne avec certaines particularités des pays froids avoisinants.

III. Le royaume des orontides arméniens de commagène et les tiars de leurs Rois

